

## ԱԼԻԵՒ ԱՅՑԵԼԱԾ Է ՆԱԽԻՋԵՄԱՆ

Ազրայեճանի նախագահ Իլիամ Ալիև երկ այցելած Է Նախիջեանի Ինք-նավար Յանրապետութիւն: Այս մասին կը հաղորդէ ազրայեճանական «Մին-վալ» կայքը:

Նախիջեանի միջազգային օդակայանին մէջ գինք դիմաւորած Է Նախի-ջեանի գերագոյն խորհրդարանի նախագահ Վասիֆ Թալիպով:

Ալիև այցելած Է Յայտար Ալիեւի յուշարձան, որ տեղակայուած Է Նախի-ջեան քաղաքի կեդրոնական շրջանին մէջ: Այնուհետեւ ան մասնակցած Է օդակայանին մէջ Նոր Էջուղիի, ինչպէս նաեւ գինուորական օդակայանի բա-ցումին:

## ԱՎՆԱՐԿ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵԶՐԱՔԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ

Պաշտօնական յայտարարութիւններուն մէջ օգտագործուող քաղաքական բառապաշարը, յատկապէս եզրաբանութիւնը ուղենշային իմաստ ունի ամբողջ վարքագիծ մը կամ քաղա-քական գործընթացներու ընկալումը փոխանցե-լու առումով: Աւելին, անկկա իր մէջ կ'ամփոփէ ռազմավարական հայեցակարգ՝ առաջադրանք-ներու իրականացման ուղղութեամբ:

Այսպէս, արցախեան հակամարտութեան բնութագրումը կատարելու համար երբ կը շեշ-տուի Արցախ-ազրայեճանական հորիզոնական ձեւակերպումը այնտեղ կայ ո'չ միայն հակամար-տութեան եւութիւնը շեշտող ըսելաձեւ, այլ նաեւ բանակցային ռազմավարական հիմնական եւա-կետ Արցախը իբրեւ անկախ միաւոր ներկայացը-նելու. իբրեւ՝ բանակցային կողմ, որուն նկատ-մամբ Ազրայեճանը կը շարունակէ իրականացնել ցեղային գտման քաղաքականութիւն: Դետեա-բար, արցախեան հակամարտութեան բնութա-գիրը հայ-ազրայեճանական կամ Յայաստան-Ազրայեճան հորիզոնական դրուածքով ներկա-յացնելը չի բխիր հայկական կողմի շահերէն: Բան մը, որ Պաքուն հետեւողականօրէն կը փոր-ձեր ո'չ միայն պաշտօնական յայտարարութիւն-ներով, այլ նաեւ ռազմագործողութիւններով, երբ տարբեր բնոյթի յարձակումներ կը գործեր Դա-յաստան-Ազրայեճան պետական սահմաններուն ուղղութեամբ: Այդ բոլորը կը միտէին Արցախ-Ազրայեճան շփման գիծը տեղափոխել Դայաս-տան-Ազրայեճան սահմանագօտի՝ հակամար-տութիւնը վերածելու համար Դայաստան-Ազըր-այեճանի:

Այս բոլորին նպատակը Արցախը անկախ միաւոր իրաւակարգելու փորձերը չեզոքացնելու համար էին: Միաժամանակ, հակամարտութեան մէջ Դայաստանի Դանրապետութիւնը իբրեւ նա-խայարձակ ներկայացնելու: Դայկական կողմը թէ՛ պետական եւ թէ՛ տեղեկատուական մակար-դակներով բազմիցս ներքաշուեցաւ ազրայեճա-նական եզրաբանական ծուղակին մէջ՝ յաճախ հակամարտութիւնը ներկայացնելով իբրեւ Դա-յաստան-Ազրայեճան:

Արցախեան 44-օրեայ պատերազմը ընդիա-տած հրադարարի Նոյեմբերեան յայտարարու-թիւնը Նուիրականացուց հակամարտութեան բնութագիրին տեղափոխումը այլ հարթութիւն. յատկապէս յայտարարութեան 9-րդ կետով: Վեր-իշէնքը 9-րդ կետը.

9.- Ապաշրջափակում եւ տարածաշրջանում բոլոր տնտեսական եւ փոխադրական կապերը: Դայաստանի Դանրապետութիւնն ապահովում է փոխադրական հաղորդակցութիւնը Ազրայեճա-նի արեւմտեան շրջանների եւ Նախիջեանի ինք-նավար հանրապետութեան միջեւ՝ երկու ուղղու-թիւններով քաղաքացիների, փոխադրական մի-ջոցների եւ ապրանքների անխոչընդոտ տեղա-շարժը կազմակերպելու նպատակով: Փոխադրա-կան երթեւեկութեան հսկողութիւնն իրականաց-նում եւ Ռուսաստանի Դաշնութեան ԱՄ- վ-տանգութեան դաշնային ծառայութեան Սահմա-նապահ ծառայութեան մարմինները:

Ազրայեճան-Արցախ պատերազմի հրադարա-րի համաձայնութեան մէջ կը խօսուի ո'չ միայն Դայաստանի Դանրապետութեան հետ փոխադ-րական հաղորդակցութեան, անխոչընդոտ տե-ղաշարժերու մասին, այլ նաեւ տարածաշրջանի ապաշրջափակման, որ բնականաբար կը վերա-բերի Թուրքիոյ, Դայաստանի Դանրապետութեան եւ Ազրայեճանի սահմաններուն:

Դայկական լրատուադաշտի մէջ երեւցաւ նաեւ «յետընթիլքային» բառեզրը՝ ներկայ իրավի-ճակը բնութագրող: Ձեւակերպումը կը պատկա-նի նախ եւ առաջ Ռուսիոյ արտաքին գործոց նա-խարարին: Յետհակամարտայինը կ'ենթադրէ հակամարտութեան աւարտ, կ'ենթադրէ կար-գաւորում: Մինչդեռ արձանագրուածը հրադա-դար է: Կարգաւորման համար բանակցութիւննե-րու վերաձեռնարկումը արդէն օրակարգ է:

Անաւելագոյն պարագային յետպատերազմ-եան իրավիճակ ըսելը կրնայ բացատրել ներկայ կացութիւնը: Յետհրադարարայինը աւելի բնու-թագրական է, եթէ կ'ընդունինք, որ պատերազմի մէկ արարն է, որ փակուած է, եւ հայկական

«Ա.»

Շար.ը՝ էջ 4

## ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԲԻՐՏ ՈՒԺԻ ԿԸ ԴԻՄԵ ԴԱՐԻՐԱՒՈՐ ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐ ԿԸ ՎԻՐԱՒՈՐՈՒՄ ԲՈՆԱԳՐԱՒԵԱԼ ԱՐԵՒԷԼԵԱՆ ԵՐՈՒՄԱՂԵՄԻ ՄԵՋ



Բռնագրաւեալ Արեւելեան Երուսաղէ-մի մէջ հարիւրաւոր պաղեստինցիներ վնասուած են իսրայելեան ոստիկանու-թեան հետ բախումներու պատճառով:

Բախումները սկսած են 10 մայիսի առաւօտեան: Իսրայելեան ոստիկա-

նութիւնը արցունքաբեր կազ օգտա-գործած է պաղեստինցիները ետ մղե-լու Աքսա մզկիթի տարածքէն, եւ կրա-կած է ձգախեծէ փամփուշտներով:

Պաղեստինեան Կարմիր մահիկի

Շար.ը՝ էջ 8

## «ԻՍՐԱՅԷԼ ՊԵՏԸ Է ԴԱՐԻ ԵՐՈՒՄԱՂԵՄԻ ՄԵՋ ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ ՅԱՐՁԱԿԵԼԷ»

Կ'ԸՍԷ ԲԱԼԸՆ

Թուրքիան կող կ'ուղղէ՝ անյապաղ դադրեցնելու Իսրայելի բռնագրաւումի ուժերուն Երուսաղէմի խաղաղ ու ան-զէն պաղեստինցի բնակիչներուն դէմ կատարուած բռնութիւնները: Այս մա-սին «Թուրքիոյ»-ի վրայ գրած է Թուր-քիոյ նախագահի բանբեր Իպրահիմ Բալլըն:

Շար.ը՝ էջ 2

## ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱԳՆԵՐՈՒ ԱՉԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆ ԻՐ ԻՍՐԱՅԷԼԱՑԻ ՊԱՇՏՈՆԱԿԻՑԻՆ.

## «ՄԵԾԱՊԵՍ ՄՏԱՅՈԳ ԵՆՔ ԵՐՈՒՄԱՂԵՄԻ ՄԵՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ ԲԱԽՈՒՄՆԵՐՈՎ»

Սալիտակ տունը հաղորդեց, որ Միացեալ Նահանգներու ազգային անվտանգութեան խորհրդատու Ճէյք Սալիվըն իր իսրայելացի պաշտօնակի-ցին հետ հեռաձայնային հաղորդակ-ցութեան մը ընթացքին իր «խոր մտա-հոգութիւն»-ը յայտնած է վերջին օրե-րուն Երուսաղէմի մէջ տեղի ունեցած բախումներուն առնչութեամբ:

«Պարոն Սալիվըն դարձեալ Միաց-եալ Նահանգներու խոր մտահոգութիւ-նը յայտնեց Շէյխ ժարաաի թաղամասին

Շար.ը՝ էջ 2



## ԻՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՀԱՏԱՏԵ ՊԱՂՏԱՏԻ ՄԵՋ ՄԵՈՒՏԱԿԱՆ ԱՐԱՔԻՈՅ ՀԵՏ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

Իրանի արտաքին գործոց նախա-րարութեան բանբեր Սալիտ Խաթիպ-զատէ հաստատեց, որ Պաղեստի մէջ տեղի ունեցած են Սեւտական Արա-քիոյ հետ բանակցութիւններ, «որոնց ընթացքին քննարկուեցան երկկողմա-նի յարաբերութիւններն ու շրջանային թըղ-թածարարները»:

Խաթիպզատէ յայտնեց, որ իր երկի-րը կը յուսայ «Սեւտական Արաքիոյ հետ երկկողմանի յարաբերութիւննե-րուն ու շրջանային զարգացումներուն



շուրջ իսկական փոխադարձ  
Շար.ը՝ էջ 2

## ՓԱՇԻՆԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՍ ՉԸՆՏՐՈՒԹԵԱՒ ՎԱՐՉԱՊԵՏ

## ՆԱԽԱԳԱՅ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍԵԱՆ ՄՏՈՐԱԳՐԵՑ 20 ՅՈՒՆԻՍԻՆ ԱՐՏԱՅԵՐԹ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴՐԱՄԱՆԱԳԻՐ



Երկ՝ 10 մայիս 2021-ին, Դայաստանի Ազգային ժողովին մէջ տեղի ունեցաւ յատուկ նիստ՝ վարչապե-տի ընտրութեան օրակարգով: Ինչպէս նախատեսւած էր, Ազգային ժողովը երկրորդ փուլով կրկին Նիկոլ Փաշինեանը չընտրեց վարչապետ. այսպիսով, Սահ-մանադրութեան համաձայն, իրաւունքի ուժով եօթ-ներորդ գումարման Ազգային ժողովը պիտի արձա-կուի:

Վարչապետի ընտրութեան համար իրաւորուած յատուկ նիստին պատգամաւորներու ընդհանուր թիւին առնուազն մէկ երրորդին կողմէ վարչապետի թեկնածու առաջադրուած Նիկոլ Փաշինեան չստա-ցաւ ընտրուելու անհրաժեշտ բաւարար ձայներ: Անոր թեկնածութեան թեր եւ դէմ քուէարկեցին մէկա-կան պատգամաւորներ, 76 պատգամաւոր քուէար-կեց ձեռնապահ:

Շար.ը՝ էջ 8

## ԿԻՐՕ ՄԱՆՈՅԵԱՆ. «ՈՌՊԵՐԹ ԸՈՉԱՐԵԱՆԸ ԿԱՐՈՂ, ԻՆՔՆԱԿԱՍԱՅ, ՈՒԺԵՂ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ Է»

Շատ կարեւոր է, որ 2018-ին ձեռք բերած ինքնավըս-տահութիւնը ժողո-վուրդը գործադրե՛ այս անգամ ընտրե-լով ճիշդ իշխանու-թիւն. «Երկիր»-ի հետ գրոյցի մը ըն-թացքին ըսաւ ԴՅԴ Բիւրոյի անդամ եւ Դայ դատի եւ քա-ղաքական հարցե-րու գրասենեակի պատասխանատու Կիւրօ Մանոյ-եան՝ անդրադառնալով յառաջիկային սպասուելիք խորհրդարանական ընտրութիւններուն:



Շար.ը՝ էջ 8

## ՄՈՒՐԱՏ ՓԱՓԱՉԵԱՆ. «ԷՄԱՆՈՒԷԼ ՄԱՔՐՈՆ ԴԱՄԱՁԱՅՆ ՉԷ ԵՈՎԿՈՐԱՄԱՆ ԴԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԿԵՏԵՐՈՒՆ ԴԵՏ»


«Էմանուէլ Մաք-րոն համաձայն չէ եռակողմանի հա-մաձայնագիրի կե-տերուն հետ, որոնք կը վերաբերին Շուշին եւ Դատրո-թը Ազրայեճանին յանձնելուն, ան հա-մուգուած է, որ կայ առիթ բարելաւելու այդ կետերը», ըսած է Մուրատ Փափագ-եան:

Ֆրանսայի հայկական կազմակերպութիւնները համակարգող խորհուրդի համանախագահ, ԴՅԴ Բիւրոյի անդամ Մուրատ Փափագեանի համաձայն, Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնը 12 Նոյեմ-բերին իրենց հետ հանդիպման ժամանակ յայտարա-րած է, որ համաձայն չէ եռակողմ համաձայնագիրի կետերուն հետ, որոնք կը վերաբերին Շուշին եւ Դատ-րութիւնը Ազրայեճանին յանձնելուն եւ Դայաստանի հա-րաւով Թուրքիոյ եւ Ազրայեճանի համար միջանցքի բացմանը:

Շար.ը՝ էջ 8



«Քորոնա» ժահիրին դէմ պատուաստ  
ստանալու համար արձանագրուեցէ՛ք.  
c o v a x . m o r p h . g o v . l i b





## ՖԱՅՍԻ ԶԱՊՊԱՐԱՅԻ ՅԵՏ ԸՆՆԱՐԿԵՑ ՍԵՈՒՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՅԵՏ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՐԴԻՆՔՆԵՐԸ



Ներքին գործոց եւ քաղաքապետութեանց հարցերու նախարարի պաշտօնակատար Սոհամետ Ֆահմի երեկ նախարարութեան կեդրոնին մէջ ընդունեց Սեուտական Արաբիոյ մէջ Լիբանանի դեսպան Ֆաուզի Զապպարան, որուն հետ քննարկեց սեուտական իշխանութիւններուն հետ խորհրդակցութիւններուն արդիւնքները՝ Լիբանանէն երկրագործական արտադրութիւններու ներածումը կասեցնելու անոնց որոշումին լոյսին տակ։

Նշենք, որ Ֆահմիի այցելեց նաեւ նախկին նախարար Ահմետ Ֆաթֆաթ, որուն հետ քննարկեց լիբանանեան ընդհանուր իրադարձութիւնները։

Քննարկուեցան նաեւ Սեուտական Արաբիոյ հետ Ֆահմիի կատարած խորհրդակցութիւնները։

Ֆահմի ընդունեց նաեւ Յըզպալլայի մէկ պատուիրակուրթիւնը։ Քննարկուեցան լիբանանեան ընդհանուր իրադարձութիւնները։

## «ԽՈՒՄԲ ՍԸ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՅԵՏ ԿԸ ԶԱՆԱՍ ԶԻՄՆԵԼ

### «Գ. ԱՆԿԱՒՈՒԹԵԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ»

ԵՇԵՏԵՑ ՆՈՒՅԱՏ ՄԱՇՆՈՒՔ

Երեսփոխան Նուհատ Մաշնուք յայտնեց, որ խումբ մը ընկերներու հետ, որոնք նախկին վարչապետ Ռաֆիք Յարիրիի համակրիւններն են, կը ջանայ հիմնել «Գ. անկախութեան շարժումը»։

Մաշնուք շեշտեց, որ «Գ. անկախութեան շարժումը» պիտի ըլլայ քաղաքական ընդդիմադիր լուրջ ճակատ մը, որուն մաս պիտի կազմեն բազմաթիւ անձնաւորութիւններ, եւ որուն պարտականութիւնն ու հռչակագիրին մէջ ամրագրուած նպատակները պիտի ըլլան յանգիլ լիբանանեան քաղաքական որոշումի, որ Լիբանանը Իրանի քաղաքական բռնագրաւումէն դուրս կը բերէ։

«Ներկայիս Լիբանան մուտք գործած է իրանեան բռնատիրութեան դիմակը բացայայտող փուլի մը մէջ, ուր այլեւս կարելի չէ այդ բռնատիրութիւնը պահել», ըսաւ Մաշնուք։

Միւս կողմէ, Մաշնուք յայտնեց, որ իր դէմ ամերիկեան պատժամիջոցներ որդեգրելու մասին լուրերը տարածուած են Իսլամ եղբայրներուն կողմէ, սակայն այդ տեղեկութիւնը անճիշդ է, որովհետեւ իր կեցուածքներուն եւ վարչական ուղեգիծին մասին ոչ մէկ պատժամիջոց որդեգրուած է։

## ՍԱՍԻ ԺԵՄԱՅԷԼ. «ՊԵՏԸ Է ԿԱԶՄԵԼ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՇՐՋԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՍԸ, ՈՐ ԿԸ ԿԱՍԵՑՆԵ ԵՐԿՐԻՆ ՓԼՈՒԶՈՒՄԸ»

Փաղանգաւոր կուսակցութեան ղեկավար Սամի Ժմալայէ հարցազրոյցի մը ընթացքին շեշտեց փոխանցման շրջանի կառավարութիւն մը կազմելու անհրաժեշտութիւնը՝ աւելցնելով, որ այդ կառավարութիւնը պէտք է կասեցնէ երկրին փլուզումը։

Ժմալայէ կոչ ուղղեց միջազգային ընտանիքին փոփոխութեան հետ քայլ պահելու եւ պատասխանատուները հաշուետւութեան կանչելու, ինչպէս նաեւ երաշխաւորելու դէպի տոր Լիբանան ժողովրդավարական ոստումը։

«17 հոկտեմբերի յեղափոխութենէ 19 ամիս ետք, Պելրութի պայթումէն եւ Յասսան Տիապի կառավարութեան իրաժարականէն 9 ամիս ետք, կը վկայենք Լիբանանի փլուզումը։ Պահեստի գումարները իրենց աւարտին հասնելու սեմին են, իսկ քաղաքացիներուն տրամադրուած նպաստը մօտիկ ապագային վերջ պիտի գտնէ։ Լիբանանի կրթական համակարգը տկարացած է, ուսուցիչներն ու բժիշկները կը հեռանան Լիբանանէն, իսկ երկիրը սկսած է իր դիմագիծը փոխել եւ նմանիլ Իրանի, Վենեզուելայի եւ Մուրիոյ», ըսաւ ան։

Ժմալայէ կոչ ուղղեց, որ ընդդիմադիր ուժերը միասնա եւ յստակ ծրագիրով մը առաջնորդուին՝ ընդդէմ այս խմբաւորութիւնին, որուն կը ըզրկանաւորէ զինքն ալ միլիոն, այսինքն՝ Յըզպալլան եւ քաղաքական մաֆիան, որոնք իրարու միջեւ գործակցութիւնը կը պահեն՝ նախազգաական համաձայնութենէն սկսեալ։

Ան նշեց, որ եթէ երեսփոխանները փափաքին իրաժարիլ եւ յաւելեալ աղետներու առաջը առնել, ողջունելի կ'ըլլայ, «այսպէս» թող երեսփոխանական ընտրութիւնները կատարուին ասիմանադրութեամբ ճշդուած թուականին», ըսաւ ան։



## ԼԻԲԱՆԱՆԻ ՏԱՐԱԾԵԻՆ ԳՈՐԾՈՂ ՍԵՓԱԿԱՆ ՅԻՒԱՆԴԱՆՈՑՆԵՐԸ ՊԻՏԻ ԴԱԴՐԻՆ ՅԻՒԱՆԴԱՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼԷ

Մինչ Լիբանանը կը գտնուի կատաղի անորոշութեան մէջ, երեկ Լիբանանի մէջ գործող սեփական հիւանդանոցներու սեւտիքան յայտարարեց, որ Լիբանանի տարածքին գործող սեփական բոլոր հիւանդանոցները պիտի դադրին հիւանդները ընդունելէ՝ մերժելով փոքրիկն Էլլա Թաննուսի հարցով արձակուած դատական վճիռը։

Հիւանդանոցներու սեւտիքան շեշտեց, որ հիւանդանոցները իրենց արտաքին գրասենեակներուն մէջ հիւանդները ընդունելէ պիտի դադրին, բացի շտապ պարագաներէն, ինչպէս նաեւ երկկամերը լուացող եւ քիմիական դարմանում ստացող պարագաներէն։

Սեփական հիւանդանոցներու սեւտիքային համաձայն, այս որոշումը գործադրութեան դրուեցաւ երեկ եւ պիտի շարունակուի մինչեւ շաբաթ, 15 մայիս 2021։

Նշենք, որ սեփական հիւանդանոցներու սեւտիքային նախագահ Սլէյման Յարուն յայտնեց, որ առողջապահական մարզը կը տառապի քառսէ մը՝ աւելցնելով, որ այդ մարզը կը գտնուի աղետալի կացութեան մէջ, իսկ դարմանումի ծախսերը հետզհետէ կը բարձրանան։

Միւս կողմէ, վառելանիւթ բաժնող ընկերութիւններու ներկայացուցիչ Ֆատի Ապու Շաքրա շեշտեց, որ իրենց կը մերժեն վառելանիւթի տրամադրուած նպաստին կասեցումը՝ աւելցնելով, որ վառելանիւթի տագնապ գոյութիւն ունի, եւ քաղաքացիները պէտք է հասկնան այս իրականութիւնը։

Իր կարգին, պենզինի կայարաններու սեփականատէրերու սեւտիքային նախագահ Ժորժ Պրաքս յայտնեց, որ պենզինի տագնապին լուծումը ապահովուելու սեմին կը գտնուի։

## ԻՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ...

Շարունակուած Ա. Էջէն

հասկացողութիւն գոյացնել եւ տարակարծութիւնները լուծել»՝ նշելով. «Բանակցութիւններուն յաջողութիւնն ու անոնց մէջ յառաջընթացի արձանագրումը կը պահանջէ Ռիատի կողմէ Թեհրանի նկատմամբ քաղաքականութեան ու խօսեցածի փոփոխութիւնը»։

Սեուտական Արաբիոյ արտաքին գործոց նախարարութեան քաղաքականութեան ծրագրման բաժանմունքի ղեկավար Ռայետ Զարիմի նախապէս հաստատած էր երկու երկիրներուն մի-

ջեւ բանակցութիւններու կայացման լուրը՝ շեշտելով. «Անոնց նպատակը շրջանին մէջ լարուածութեան վերջ տալու ուղիի որոնումն է»։

Սեուտի պաշտօնատարը յոյս յայտնեց, որ բանակցութիւնները յաջողութեամբ կ'աւարտին՝ աւելցնելով. «Որոշակի որեւէ եզրակացութեան հասնելու համար տակաւին կանուխ է»։

## «ԻՍՐԱՅԷԼ ՊԵՏԸ Է ԴԱԴՐԻ ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՄԵՋ...»

Շարունակուած Ա. Էջէն

Ան նշած է, որ Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանի յանձնարարականով՝ Անգարան բոլոր մակարդակներուն վրայ կիրարկած է լծակներ, որպէսզի դադրեցնէ գրաւեալ Արեւելեան Երուսաղէմի մէջ Իսրայէլի բռնարարքները։

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մեւլութ Չաւուշօղլու իր կարգին «Թուրքիոյ»-ի վրայ գրառում կատարելով քննադատեց իսրայէլեան բռնա-

րարքը։ «Անոնք, որոնք այս վայրագութեան դէմ չեն խօսիր, պէտք չէ Միջին Արեւելքի խաղաղութեան հոլովոյթին մասին խօսին», գրեց Չաւուշօղլու։

Ան Թուրքիոյ զօրակցութիւնը յայտնեց պաղեստինցի ժողովուրդին՝ ըսելով, որ Թուրքիան «պիտի շարունակէ մեր պաղեստինցի եղբայրներուն ու ընդդէմը ծայրը ըլլալ եւ պաշտպանել անոնց իրաւունքները»։

## «ՄԵԾԱՊԵՍ ՄՏԱՅՈՎ ԵՆՔ ԵՐՈՒՍԱՂԵՍԻ...»

Շարունակուած Ա. Էջէն

մէջ իրենց քնակարաններէն պաղեստինցի ընտանիքներու հաւանական վտարման առնչութեամբ, եւ անոնք համաձայն գտնուեցան, որ Կազայէն Իսրայէլի վրայ հրթիռային եւ դիւրավար նիւթերով օդապարիկներով յարձակումները անընդունելի են եւ քայտը է զանոնք դատապարտել», աւելցուց Սպիտակ լուրը։

ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Անթոնիո Կուրիեթե իր կարգին շեշտեց, որ Իսրայէլ պէտք է առաւելագոյն ինքնազսպումը ցուցաբերէ եւ յարգէ խա-

ղաղ հաւաքի իրաւունքը։

ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարը իր խոր մտահոգութիւնը յայտնեց «բռնագրաւեալ Արեւելեան Երուսաղէմի մէջ բռնութեան շարունակման, ինչպէս նաեւ պաղեստինցի ընտանիքներ իրենց քնակավայրերէն վտարելու կարելիութեան առնչութեամբ։ Ան Իսրայէլը յորդորեց դադրեցնելու քաղաքում ու վտարումը», ինչպէս նաեւ «պապանելու սրբատեղիներու ներկայ կարգավիճակն ու զայն յարգելու»։

**ՀԱՌԻԼՐՏ ԳԱՐԱԿԷՕՋԵԱՆ**  
Հասարակութիւնը իր բժշկական եւ ընկերային ծառայութիւններու կողքին ի գործ դրած է նաեւ «ՓԱՐՈՍ 2»

**ծրագիրը: Այս ծրագրին հիմնական նպատակն է, այցելել այն հայորդիներուն բնակարանները, որոնք ֆիզիքապէս անկարող են գտնուիլ դուրս գալու եւ անոնց ապահովել բժշկական անմիջական խնամք:**

Բոլոր անոնք, որոնք կարիքը ունին այս ծառայութեան կամ յաւելեալ մանրամասնութեան կրնան կապ հաստատել Տիկ. Շողակաթ Սլիխանեան-Մուրատեանին հետ՝

☎ 01/258 717 ☎ 78/968 169  
ամէն օր առաւօտեան ժամը 8:00–4:00:

**ՏԵՐԵՆՈՒԹԻՒՆ**

Հետեւեցէք մեզ Karagheusian Association KaragheusianAssociation

## ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

●ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹԵԱՆ նախարարութեան տեղեկութիւններուն համաձայն, Լիբանանի մէջ նախորդ 24 ժամուան ընթացքին արձանագրուած են «Քորոնա» ժահրով 302 վարակուածներ եւ մահացած 21 ուրիշներ։

●ԱՐՏԱՔԻՆ գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարարի պաշտօնակատար Շարպել Ուեհպէ ընդունեց Պելրութի մէջ Միջազգային կարմիր խաչի կոմիտէի նախագահ Քրիսթոֆ Մարթինը, որուն այցելութիւնը հրաժեշտի քնոյթ ունէր։ Ուեհպէ Մարթինին յաջողութիւն մաղթեց՝ դրուատելով Լիբանանի մէջ Միջազգային կարմիր խաչին դերակատարութիւնը։

●ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ փոխնախագահ Էլի Ֆըրզլի երեկ ընդունեց Լիբանանի մէջ Ռուսիոյ դեսպան Ալեքսանտր Ռուտաբովը, որուն հետ քննարկեց ընդհանուր իրադարձութիւնները։ Ֆըրզլիի այցելեց նաեւ Լիբանանի մէջ Եգիպտոսի դեսպան Եասեր Ալաուիին։ Քննարկուեցան լիբանանեան քաղաքական բեմը յուզող հարցեր։

●ՄԱՐՈՆԻ համայնքի Պշարա Ռայի պատրիարքը ընդունեց նախկին վարչապետ Թամմաժ Սալամը, որուն հետ քննարկեց ներքին լիբանանեան իրադարձութիւնները։ Հանդիպումին ընթացքին համաձայնութիւն գոյացաւ՝ կառավարութեան կազմութեան հոլովոյթը արագացնելու հոլովոյթին շուրջ, որպէսզի կարելի ըլլայ վերջ տալ Լիբանանի փլուզման։

●ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ հանդիպում պլոքի երեսփոխան Պիլալ Ապտալլա յայտնեց, որ տրամաբանական եւ ընդունելի չէ, որ շուկային մէջ գտնուող արտադրութիւններուն սակերը այսքան բարձր մնան։ Ան կոչ ուղղեց շահագործումը կասեցնելու եւ ազգային գիտակցութեամբ վարուելու։

●ՄՈՒՍԹԱՔՊԱԼ պլոքի երեսփոխան Սոհամետ Հաժժար յայտնեց, որ հանրապետութեան նախագահ գոր. Միշել Աունի խմբաւորումը, այսինքն՝ Ազգային ազատ իտանց կուսակցութիւնն ու անոր ղեկավարը՝ Երեսփոխան Ժըպրան Պասիլ, կը պնդեն երկիրը դէպի փլուզում տանելու ընտրանքը, եթէ իրենց պահանջները չկատարուին։

Հաժժար յայտնեց, որ նշանակեալ վարչապետ Սաատ Հարիրիի եւ Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Ժան Իվ Լը Տիլանի հանդիպումին քննարկուած են երեք հարցեր. ա) Ֆրանսական նախաձեռնութիւնը տակաւին կը գտնուի սեղանին վրայ, եւ Ֆրանսա ներքին լիբանանեան հարցերուն միջամուխ պիտի չդառնայ, բ) Ֆրանսա կը շարունակէ զօրակցիլ Լիբանանին, եւ գ) Լիբանանի դէմ պիտի գործադրուին շարք մը պատժամիջոցներ։

●ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ հանդիպում պլոքի երեսփոխան Նամմ Թոհմէ զգուշացուց բռնկելիք ժողովրդային ցասումէն։ Ան կոչ ուղղեց տնտեսական եւ ընկերային արտակարգ վիճակ յայտարարելու։

●ՍԵԼԻՄ Սլամ շրջանին մէջ գտնուող քնակարանային համալիրի մը շէքերէն մէկուն մէջ հսկայ հրդեհ մը բռնկած է՝ մագուրթի տակաւին մը պատճառով։

●ԱՍԱԼ շարժումը իրապարակեց հաղորդագրութիւն մը, որ կը նշէ, թէ քաղաքական ուժերուն միջեւ ամբաստանութիւններու փոխանակումը սկսած է հարցազնային տակ առնել գոյատեւելու կարելիութիւնը։

●ՂՈՎՄԻ կուսակցութիւնը իրապարակեց հաղորդագրութիւն մը, որ կը նշէ, թէ Հալապի սպանդի թղթածրարը ժամանակի ընթացքին կարելի պիտի չըլլայ փակել եւ մոռացութեան ենթարկել։ «Կը խոստանանք նահատակներուն»՝ չզլանալ արդարութիւնը իրագործելու», կը նշէ հաղորդագրութիւնը։

●«ԺՈՒՐՈՒՐԻԱ» օրաթերթին համաձայն, բարեկամներու մակարդակի վրայ խորհրդակցութեան ճիգեր կը նշմարուին՝ հանրապետութեան նախագահ գոր. Միշել Աունի եւ նշանակեալ վարչապետ Սաատ Հարիրիի միջեւ հանդիպում մը կազմակերպելու նպատակով։

## «ԱԶԴԱԿ»-Ի ՖՈՆՏԻՆ

- Մասթըր Կարօ Բեպպաքեանի մահուան քառասունքին առիթով՝
- Տէր եւ տիկին Աբօ եւ Սիլվա Մոսիկեան 200.000 լ. n.

## REQUIRED

Well-established Dental Clinic in Beirut, looking to hire a female dental assistant with good organizational and communication skills (Arabic and English or French) to join our team. Experience in the field is required.

Send CV to recruitingdentalassistant 2021@gmail.com



# ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵՆԷՆ ՃՈՂՈՊՐԱԾ ՏՐՑԱԿ ՄԸ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՀԵՏ



Չարուհի, Լիա, Արաքսիա, Յովհաննես: Ուրֆացի Պօղոս Եւ Մարիամ Յացագործաններու չորս զաւակները: Անցեալ դարու ողբերգական պատմութիւններէն մին ունեցող ընտանիքի մը ողիսականն է, որ պիտի ջանամ ուրուագծել՝ առանց ոլորապտոյտներու մէջ մտնելու: Բայց ամբողջ պատմութիւնը կրնայ ձեզ քիչ մը յոգնեցնել: Այս ընտանիքին անդամներուն իւրաքանչիւրին ճակատագիրը կրնայ շատ աղօտ գաղափար մը տալ ցեղասպանութեան ենթարկուած ժողովուրդի մը ահաւոր ցալին եւ տառապանքին մասին: Յաւաքական յիշողութեան մեծ խճանկարին մէջ իր տեղը ունեցող պատմութիւնը պէտք է սկսիմ Ուրֆայէն, որուն բնակչութիւնը թուրքին զայրոյթին եւ ատելութեան զօրը դարձաւ՝ հերոսամարտ մղելէն առաջ եւ ետք:



Չարուհի՝ չորս զաւակներուն անդրանիկը, ականատեսն է իր երկու ջոյրերուն սպանութեան: Յացագործան ընտանիքը բարօր կեանք մը կ'ապրէր: Պօղոս փռապան էր: Զաղաքին հայկական թաղամասին մէջ գտնուող ընդարձակ բնակարանին մուտքին էր, որ Մարիամ օր մը Յովհաննէսը համբուրեց եւ ճամբու դրաւ դէպի Չուիցերիա: Միսիոնարներ յօժարած էին ուշիմ պատանիներ Պեռն տանիլ եւ կրթութիւն տալ: Ինը տարեկան Յովհաննէս այսպէս մեկնեցաւ Չուիցերիա: Մայրը զակկին հագուստներուն հետ անոր յանձնեց նաեւ տրցակ մը լուսանկարներ: Յեռաւոր երկրին մէջ պատանին պիտի նայէր այդ լուսանկարներուն եւ յիշէր իր ծնողները, ջոյրերը, ազգականները, հարազատները: Լուսանկարները Յովհաննէսի յիշողութիւնը վառ պիտի պահէին: Թոյլ պիտի չտային, որ պատանին մոռնար իր ջոյրերուն, ծնողներուն դէմքերը:

Մինչ Յովհաննէս Չուիցերիա հասած էր նաւով բաւական արկածալից ճամբորդութենէ մը ետք, Ուրֆայի մէջ կացութիւնը կը վատթարանար: Ձերբակալութիւններ, կողոպուտ, յարձակումներ՝ հայկական թաղերու վրայ, սպանութիւն, առեւանգում, զանազան տեսակի ճնշումներ, որոնք ուրֆացիները կը մղէին համախմբուելու եւ դիմադրելու: Այա ամէն ինչ տակնուվրայ կ'ըլլար: Սպանդի զոհ կ'երթային քաղաքին անպաշտպան բնակիչները: Չարուհիի աչքերուն դիմաց կը սպաննուէին անոր երկու ջոյրերը՝ Լիան եւ Արաքսիան: Յայրը ողջ կը մնար՝ իր արիեստին շնորհիւ: Թուրքերը Պօղոսին փուռը կը վերածէին իրենց զինուորներուն հացի մատակարարման փուռերէն մեկուն եւ, այսպիսով, մինչեւ Յալէպ փոխադրութիւնը Պօղոս, Մարիամ եւ Չարուհի Յացագործանները կը քաջքէին իրենց գոյութիւնը: Յովհաննէս Պեռն կը գտնուէր: Լիա եւ Արաքսիա զոհ գացած էին ցեղասպանութեան:



Չարուհիի ականջներուն մէջ մնացած էր լացն ու ճնոցը նորածիններու: Ամերիկացի միսիոնարներուն կեդրոնը ապաստանած աղջնակները պարիսպին այն կողմը խորունկ եւ լայնածիր փուռ կը տեսնէին: Թուրքերը հոն լեցուցած էին մահամեծ նորածիններ, նոյնիսկ՝ քանի մը տարեկան հիւժած եւ հիւանդկախ երեխաներ, որոնք իրենց վերջին շունչը կը փչէին աղիողորմ լացեւ եւ ճիչերէ ետք: Մեռելային լուծութեան մէջ, կը պատմէր Չարուհի, յանկարծ երեխայի մը սուր ճիչը եւ անընդհատ լացը զիրենք կը մղէր հաւաքելու պարիսպին վրայ բացուած փոքր լուսամուտին ջուլ՝ դիտելու եւ տեսնելու տեսարան մը, որ խարանուած մնաց Չարուհիի յիշողութեան մէջ: Օր մը Չարուհիի հայրը տուն վերադարձի ճամբուն վրայ նորածին աղջնակ մը գտաւ փողոցը: Գրկեց եւ տուն տարաւ հետը: Չայն կոչեցին Փայլածուն: Որդեգրեցին եւ Չարուհի իր կորսնցուցած երկու ջոյրերուն փոխարէնը ունեցաւ նորածին ջոյր մը...

... Արմենակ եւ Դաւիթ Չուլճեան: Երկու եղբայրներ: Ուրֆայի Թլփուր թաղի ամենէն հարուստ եւ բազմանդամ գերդաստանէն



ողջ մնացած երկու պատանիներ, որոնք անպատմելի ողիսականէ մը ետք Յալէպ հասած եւ ուրֆացի այլ պատանիներու հետ փողոցներուն մէջ իրենց գոյութիւնը քաջքէնէ ետք որբանոց տեղաւորւած էին: Չափահաս դառնալէ ետք Արմենակ միացաւ ֆրանսական ոստիկան ուժերուն, իսկ Դաւիթ արիեստաւոր մը եղաւ: Ամուսնացաւ Չարուհի Յացագործանի հետ: Արմենակն ալ ընտանիք կազմեց պուրսացի Ազգանուշ Իշխանեանի հետ: Պատմութիւնը այս երկու ընտանիքներուն միացման եւ բաժանման կէտեր ունի: Բացատրեմ: Դաւիթ եւ Չարուհի զաւակ չունեցան: Արմենակ եւ Ազգանուշ բախտաւորութեան երկու դուստրերով՝ Լուսին եւ Չուարթ: Ազգանուշ իր առաջին ամուսնութենէն ունէր Ալիսը, որ Արմենակի կողմէ որդեգրուեցաւ եւ ահա երեք դուստրեր ունեցան Արմենակ եւ Ազգանուշ: Օր մը Դաւիթ Արմենակէն խնդրեց իր երեք դուստրերէն մին իրեն յանձնել՝ իբրեւ զաւակ: Երկու եղբայրները շատ արագ համաձայնեցան: Այն պարմանուի էր: Չայն կարելի չէր յանձնել: Չուարթն ալ մէկ տարեկան էր եւ շատ փոքր էր: Ազգանուշ մերժեց զայն իր ներքոյ խնամքին յանձնել: Եւ իր հօրեղբօր ու անոր կնոջ հետ իբրեւ անոնց զաւակը ապրելու համար Լուսին յանձնուեցաւ Դաւիթի եւ Չարուհիի:



Լուսին մայրս է: Ծնած է Զոնէյթրա, 21 յուլիս 1928-ին: Ուրեմս, այսպիսով, Պեռն ապրող Յովհաննէս պաշտօնապէս կ'ըլլար մօրս մօրեղբայրը...

... Յայոց ցեղասպանութենէն ետք, յիսունական թուականներուն մարդիկ սկսան իրենց հարազատները փնտռել: «Անունս Յովհաննէս Յացագործեան: Պեռն կ'ապրիմ: Կը փնտռեմ ջոյրս՝ Չարուհին»: «Անունս Չարուհի Յացագործեան: Կ'ապրիմ Լիբանան, Կիւլապաշ թաղ: Կը փնտռեմ եղբայրս, որ փոքր տարիքին Չուիցերիա գնաց: Յովհաննէս է անունը»:



Կիւլապաշի թաղապետ Թաւուքճեանը օր մըն ալ աւետիսը տուաւ Չարուհիին: Եղբայրը զինք կը փնտռէր: 1950-ին Յովհաննէս այցելեց Լիբանան եւ ջոյր ու եղբայր զիրար գտան: Յովհաննէս իրեն հետ բերած էր տրցակ մը լուսանկարներ: Յիմա, այս պահուս, երբ այս տողերը կը գրեմ, լուսանկարները սեղանիս վրայ շարած կը դիտեմ: Անբացատրելի է ամբողջ պատմութիւնը: Ուրֆայէն Պեռն, ապա Պեռնէն Լիբանան: Եւ ահա հոս՝ սեղանին վրայ, աչքերուս դիմաց: Կը ջանամ թափանցել լուսանկարներուն մէջ կանգնած մարդոց նայուածքներուն խորքը՝ ուղեւորուելու համար ժամանակին մէջ, երթալու Ուրֆա, տեսնելու, թէ ի՞նչ պատահեցաւ այդ օր, երբ Մարիամ իր պատանի զաւակը վերջին անգամ համբուրեց եւ ճամբու դրաւ: Չեմ յաջողիր, որովհետեւ, ըստ երեւոյթին, երեսակայութիւնս այդքան հօգր չէ: Կամ ցեղասպանութեան ենթարկուած ազգի մը պատկանելու տարօրինակ զգացումն է, որ Եուրօսիմս, միտքս, ամբողջ հոգիս կ'ալեկոծէ: Մանաւանդ այս օրերուն, երբ աչքես ու ձախէն աղմուկ ու ժխոր, որ՝ հաղորդակցութեան եւ փոխադրութեան ուղիներու վերաբացման սիրոյն թերեւս կարելի է վերատեսութեան ենթարկել Թուրքիոյ նկատմամբ կեցուածքներ, դիրքորոշումներ: Ծիշո՛ւ է, որ զգացումն ու տրամաբանութիւնը իրարու պէտք չէ խառնել, բայց Չարուհիի մեծ պայուսակէն հանւած այս լուսանկարները, որոնք ժառանգորդը եւ եմ, այլ բան կը թելադրեն: Ամբողջ ազգի մը ահաւոր ճակատագրին մէկ շատ ան-նշան բաժինն են այս լուսանկարները, որոնք թելադրականութիւնը ուղեղիս մէջ կը բախի փոխադրութեան եւ հաղորդակցութեան ուղիներու վերաբացման հաշուոյն Թուրքիոյ նկատմամբ կեցուածքներու եւ դիրքորոշումներու վերանայման կարելիութեան մասին արձակուած խօսքերուն եւ կեցուածքներուն:

## ԷՐՏՈՂԱՆԻՆ ՄԵԾ ՄԻԱԸԸ



Միջին Արեւելքի ամբողջ տարածաշրջանը կը գտնուի յարաբերութիւններու կարգաւորման փուլի մը մէջ: Ընթացքի մէջ են Իրան-Միացեալ Նահանգներ եւ Իրան-Մեծնական Արաբիա բանակցութիւններ: Թուրքիան եւս կը փորձէ բնականոնացնել Եգիպտոսի, Իսրայէլի եւ Մեծնական Արաբիոյ հետ իր յարաբերութիւնները:

Այս ընդհանուր մթնոլորտին մէջ ուրբաթ, 7 մայիսին Երուսաղէմի մէջ ընթացք առին իսրայէլեան ապահովական մարմիններու եւ պաղեստինցի ցուցարարներու միջեւ բախումներ: Աքսայի մզկիթի շրջափակին մէջ եւ Արեւելեան Երուսաղէմի Շէյխ Փարրահ թաղամասերուն մէջ բախումներուն պատճառով հարիւրաւոր պաղեստինցիներ վիրաւորուեցան: Արաբական եւ իսլամական երկիրները դատապարտեցին իսրայէլեան յարձակումը:

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան, իր կարգին, Նշեալ դէպքերու հարցով յայտարարութիւն մը կատարելով, աշխարհի՝ առաջին հերթին իսլամական պետութիւններուն կոչ ուղղեց՝ «գործի լծուելու Երուսաղէմ քաղաքի մէջ սրբազան վայրերու եւ պաղեստինցիներուն դէմ Իսրայէլի յարձակումները դադրեցնելու համար» եւ «իւրաքանչիւր տարի Ռամատան ամսուան ընթացքին Աքսայի մզկիթին դէմ Իսրայէլի լստի յարձակումները» դատապարտելով՝ Նշեց. «Երուսաղէմը կը վերաբերի Պուսոյ, Տիարաբէրի, Պաղատտի, Գահիրէի, Իսլամապատի, Ճաքարթայի, Ջուալալամփուրի, Պաքուի եւ Սարայէնոյի մէջ ապրող իւրաքանչիւր անհատի»: Ան Նշեց, որ Թուրքիան որդեգրած է հարկ եղած քայլերը՝ ՄԱԿ-ը, Իսլամական համագործակցութեան կազմակերպութիւնն ու բոլոր միջազգային կազմակերպութիւնները Երուսաղէմի մէջ կատարուողի հարցով գործի լծուելու մղելու համար:

Անոր այդ յայտարարութիւնը բնականաբար ականահարեց Միացեալ Նահանգներու՝ Թուրքիոյ նկատմամբ աւելի խիստ կեցուածք որդեգրած նոր վարչակազմին մօտ բարեխօս մը եւ միջնորդ մը ապահովելու նպատակով Իսրայէլի մերձեկալու համար Թուրքիոյ դիւանագիտութեան կողմէ թափուող ջանքերը: Իսրայէլ-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման հոլովոյթը դարձաւ Երտողանի յայտարարութեան առաջին ու անմիջական գործը, սակայն՝ ոչ միակը:

Թուրքիոյ նախագահի յայտարարութիւնը թերեւս կրնայ արաբական հանրութեան մէջ շատերու ականջին հաճելի ըլլալ, սակայն՝ ոչ անոր խորթակներուն ծանօթներուն, մանաւանդ՝ ոչ արաբական երկիրներու իշխանութիւններուն: Երտողանի հակաիսրայէլեան եւ պաղեստինցիներուն զօրակցող յայտարարութիւնները պիտի չնպաստեն արաբական երկիրներու հետ Թուրքիոյ յարաբերութիւններու կարգաւորման, որովհետեւ ան անգամ մը եւս ցուցաբերեց իր իսկական երեսը, մեծամտութիւն ու փառամոլութիւնը, եւ իր յայտարարութեան երկիրներու հետ Թուրքիոյ յարաբերութիւններու կարգաւորման, որովհետեւ ան անգամ մը եւս ընդգծեց անոր սուլթանական փառամոլութիւնը եւ առաւել հաստատեց արաբական երկիրներու, մասնաւորաբար իսլամական սրբավայրեր՝ Մեքքայի եւ Մեդինայի հոգատարը ըլլալուն համար ինքզինք իսլամական աշխարհը դեկավարելու իրաւասու նկատող Մեծնական Արաբիոյ մտավախութիւնները:

Երտողան իր յայտարարութիւններով չքացուց Մեծնական Արաբիոյ Սայման պըն Ապտէլազիզ թագաւորին հետ իր վերջերս ունեցած երկու հեռաձայնային հաղորդակցութիւններուն որական ազդեցութիւնը, ինչպէս նաեւ իմաստազրկեց ու կանխաւ տապալեց իր կատարած հեռաձայնային հաղորդակցութիւններուն իբրեւ արդիւնք ձեւաւորւած Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մելուք Չաւուշօղլուի 11 մայիսին նախատեսուած Մեծնական Արաբիա այցելութիւնը, որ 2018-ին սեւուցի ընդդիմադիր լրագրող ժամալ Խաշուկիի՝ Պուսոյ սեւուական հիւպատոսարանին մէջ սպանութենէն ետք առաջին բարձրաստիճան այցելութիւնն էր, իսկ Չաւուշօղլուի համար՝ չորս տարիէ ի վեր առաջինը:

Երտողան չդիմացաւ փորձութեան եւ պաղեստինցիներուն, Երուսաղէմին ու Աքսայի աւագ պաշտպանի փետուրով զարդարուիլ շտապելով՝ մեծ սխալ մը գործեց. քարոզչական փոքր յաղթանակի մը սիրոյն իր անձին ու իր երկրին քաղաքական մեծ վնաս պատճառեց:

ՎԱՅՐԱՄ ԵՄՄԻԵՆՆ



# «ՎԱՐԱԳԱԹԱՂԻ ԱՐԾԻՒՆԵՐՈՒՆ» ԵՐԳԸ՝ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԱՐՑԱԽԵԱՆ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՊԹՕՇԵԱՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Վերջին շրջանին ընկերային ցանցերուն վրայ շրջան սկսաւ ընել «Վարագաթաղի արծիւներուն» խորագիրով երգը՝ Սեւան Կարապետեան-Աղամեանի մեկնաբանութեամբ: Այս մասին յաւելեալ տեղեկութիւններ ունենալու եւ այս նախաձեռնութեան մասին մեր ընթերցողները տեղեկացնելու նպատակով «Ազդակ» հետեւեալ գրոյցը ունեցաւ Սեւան Կարապետեան-Աղամեանին հետ:

«ԱՇՂԱԿ».- Խնդրեմ՝ նախ ներկայացուցէք ձեր երաժշտական հետաքրքրութիւնն ու փորձառութիւնը: ՍԵՒԱՆ ՎԱՐԱՊԵՏԵԱՆ-ԱՂԱՄԵԱՆ.- Երաժշտական տասնամեայ կրթութիւնս ստացած եմ Զամազգայինի «Բարսեղ Կանաչեան» քոլեճէն՝ ուսանելով ձայնամարզութիւն եւ ունենալով տարբեր ուսուցիչներ: Երաժշտութիւնը եւ յատկապէս դասական երաժշտութիւնը մեր հիմքն էր: Մենք հոն կը սորվէինք դասական երաժշտութիւն, դասական երգեցողութիւն, անշուշտ կը սորվէինք նաեւ ժողովրդական երաժշտութիւն, բայց շատ քիչ էր, շատ նուազ ժամեր կը տրամադրուէր այդ տեսակին, միշտ կեդրոնացումը կ'ըլլար դասականին վրայ, որովհետեւ, ինչպէս կ'ըսեն, դասականը հիմքն է երաժշտութեան:

Սակայն նկատի ունենալով, որ շատ կը սիրեմ ժողովրդայինը, ազգայինը, ազգագրականը եւ կը զգամ, որ երգի այս տեսակները հոգիիս շատ աւելի մօտ են, նախընտրեցի այդ ժանրին մէջ աւելի խորանալ եւ հանրութեան ներկայացնել զայն: Անշուշտ ասիկա ինծի համար ուրախութիւն կը պատճառէ, որովհետեւ երբ քու սիրածդ կ'ընես, շատ աւելի լաւը, լաւագոյնը կրնաս փոխանցել դիմացիին:

Երաժշտական փորձառութիւններս սկսած են պատանեկան տարիներուս: Երգած եմ պատանեկան երգչախումբէն, որմէ ետք, 1990-ական թուականներուն, Զամազգայինի «Պուսան» երգչախումբէն, ուր երգած եմ պարոն Թովիկեանի, ապա պարոն Երկան-Եանի ղեկավարութեամբ: Մասնակցած եմ տարբեր համերգներու, որոնցմէ են Զամազգայինի «Տաւիղ» երգչախումբին հետ կատարածներս, որոնք իրականացած են Սկրտիչ Միքայելեանի ղեկավարութեամբ: Նաեւ ունեցած եմ անձնական քանի մը երգեցողութիւններ, ըլլան անոնք ԼՕՒ-ի ձեռնարկներուն կամ Զամազգայինի եւ կամ այլ ձեռնարկներու, որոնք միշտ մասնակցութիւնս բերած եմ յատկապէս ազգային, ժողովրդային եւ ազգագրական երգերով:

«Ա.»- Ինչպէ՞ս եւ ինչո՞ւ յառաջացաւ «Վարագաթաղի արծիւներուն» երգին գաղափարը: Խօսեցէ՛ք երգին բառերը գրողին, երաժշտութիւնը յօրինողին, տեսաւիզուկալը պատրաստողին մասին:

Ս. Վ. Ա.- «Վարագաթաղի արծիւներուն» երգին գաղափարը կամ մտայղացումը յառաջացաւ արցախեան պատերազմի առաջին օրերուն, երբ մենք նաեւ Պռօշենէն ունեցանք նահատակներ, որոնց մէջ էր մեր Լիբանանի ընկերներէն Գեորգ Զաճեանը՝ այն-ճարցի, մուսալեռցի, կոմիտասագետ մեր սիրելի ընկերը, որ իր երգերով, հուժկու ձայնով եւ անզուգական կատարումներով կը հրապուրէր հանդիսատեսը՝ մեծն ու փոքրը: Բոլորը մեծ ոգետրութեամբ մտիկ կ'ընէին զինք եւ կ'ոգետրուէին իր փոխանցած ազգային շունչով, Գեորգին ձայնը անոնց մէջ կ'արթնցներ ազգային ոգին, անոր ձայնը իսկական ներշնչարան էր:

Ընկեր Գեորգին նահատակութեամբ մենք կորսնցուցինք ազգային մեծ գործիչ եւ հայրենասիրական մղումներով լեցուած անձնաւորութիւն մը, որ նաեւ կրնար դաստիարակել ապագայ սերունդներ: Իր եւ իր ընկերներուն յիշատակը յանդիմանելու համար մենք՝ քանի մը ընկերներով, որոշեցինք, որ Նոր սերունդին մէջ ապրեցնենք ազգային ոգին, անոր մէջ ներմուծենք ազգայինը, հայրենասիրականը, նաեւ այսպիսով սերունդէ-սերունդ այս երգերը ապրին ու գոյատեւեն: Մենք այդ ազգայինը, հայրենասիրականը կ'ապրինք, իսկ մեր գաւակները, մեր սերունդները պիտի սորվին, պետք է որ մենք սորվեցնենք իրենց, թէ ո՛վ էինք եւ ո՛վ պիտի մնանք՝ իբրեւ հայ ժողովուրդ: Որոշեցինք քանի մը ընկերներով այս երգը պատրաստել եւ, այսպիսով, մեր ապագայի սերունդներուն սորվեցնել մեր ֆետայիներուն, յատկապէս Նորօրեայ ֆետայիներուն կենսքին մասին:

Խնորեցի Զամբիկ Պիլալեանէն, որ մեր այս տղոց յիշատակը յանդիմանելու համար երգ մը գրէ. ան ընդառաջեց եւ ըսաւ, որ շատ լաւ առաջարկ է, որովհետեւ ինք ալ ի մտի ունէր գրել մեր նահատակ տղոց մասին, սակայն մոլիչ ուժի մը կարիքը ունէր, որպէսզի գրութեամբ, բանաստեղծութեամբ յարգէ նահատակ տղոց յիշատակը, նաեւ յանդիմանէ անոնց հոգիները, իսկ բանաստեղծութիւնը երգի վերածելով՝ մեր նպատակին իսկապէս հասած կ'ըլլանք:

Քանի մը օրէն Զամբիկ Պիլալեան ինծի դրկել «Վարագաթաղի արծիւներուն» այս գեղեցիկ ու հրաշալի բառերը, ես ալ խնդրեցի Մայք Աշճեանէն՝ Զամազգայինի «Բարսեղ Կանաչեան» երաժշտանոցի մեր սիրելի ուսուցիչներէն, որ այս երգին երաժշտութիւն մը յօրինէ: Ան ես ողջունեց եւ սրտին խօսող որակեց առաջարկը՝ Նշելով, որ մեզմէ իւրաքանչիւր բան մը պետք է տայ ազգին՝ մէկը երաժշտութեամբ, ուրիշ մը բանաստեղծութեամբ, մէկը իր ձայնով, եւ մենք պետք է այս ձեւով կարենանք նուազագոյնը տալ մեր ազգին ու մեր ժողովուրդին: Ան ես կարծ ժամանակամիջոցի մէջ գեղեցիկ երաժշտութիւնը պատրաստեց եւ դրա տրամադրութեանս տակ: «Զորնա»-ի համաճարակին դժուարութիւնները, Լիբանանի տնտեսական պայմանները, Լիբանանի անկայուն վիճակը որոշ չափով կասեցուցին մեր աշխատանքը, բայց վճռած էինք հետապնդել այս աշխատանքը եւ իրականութիւն դարձնել երգը: Յաջորդ փուլը երգին արձանագրութիւնն էր. խնդրեցինք մեր սիրելի ընկեր Սարո Թորիկեանէն, որ եթէ կարենայ ինք մշակումը ընէ այս երգին, որպէսզի ամբողջական դառնայ: Անոր պատասխանն ալ տարբեր չէր միասնեմէն, ըսաւ՝ նուազագոյնն է, որ մենք պիտի ընենք մեր հերոսներուն, ուստի մեծ սիրով ընդառաջեց առաջարկին: Բաւական ժամանակ տրամադրելէ ետք երգին մշակումին վրայ, մենք ունեցանք մեր ամբողջական հրաշալի երգը՝ «Վարանգաթաղի արծիւները» եւ «Սթիւտի Թորիկ»-ի մէջ ձայնագրեցինք զայն: Իսկական հրաշալի կ'ընեմ, որովհետեւ իւրաքանչիւր բառ, նախադասութիւն յստուկ իմաստ ունի, երաժշտութիւնը, մշակումը բոլորը միասին մէկտեղուած կազմեցին բարձունք մը, երաժշտական բարձունք մը, որ քանի մը շաբաթ առաջ արդէն իսկ ներկայացուցինք մեր հանրութեան:

Տեսաւիզուկակի պարագային, ինծի օժանդակեցին սիրելի եւ յարգելի ընկերներ, որոնցմէ է Շանթ Դազարեանը՝ Զանատայէն եւ լիբանանահայ, ներկայիս Դայաստան բնակող Յակոբ Ուրֆալեանը:

Դայաստան բնակող մեր ընկերներէն Նժդէ Լափաճեանը սիրալոծար կերպով պատրաստեց այս տեսաւիզուկալը, որ ամբողջու-




թեամբ իր ճաշակով, պեղումներով եւ հսկայական աշխատանքով իրականացաւ: Ես երբեք միջամտութիւն չըրի անոր պատրաստութեան աշխատանքներուն եւ, այսպիսով, ծնունդ առաւ այս գեղեցիկ տեսաւիզուկալը:

«Վարագաթաղի արծիւներ» երգին ստեղծագործական աշխատանքներուն բոլոր մասնակիցներուն անհատ առ անհատ անխտիր շնորհակալութիւն կը յայտնեմ, որովհետեւ անոնցմէ իւրաքանչիւրը հերոս մըն է ինծի համար, իւրաքանչիւրին ներդրումով կարելի եղաւ իրականացնել մեր նպատակը եւ յանդիմանել մեր անմահ հերոսները:



«Ա.»- Այրիկ 24-ին ձեր Դիմատետրի եւ Եութիպի Էջերուն վրայ հրապարակեցիք «Յուշարձան Լիզպոնի նահատակներուն» խորագիրով երգը: Խօսեցէ՛ք անոր մասին:

Ս. Վ. Ա.- Լիզպոնի հինգ հերոսները իրենց գերմարդկային օրինակով ցոյց տուին, որ ապարդիւն են հայկական արդարութեան դռները լռեցնելու բոլոր փորձերը: Այս հինգ երիտասարդները հայրենիքը չտեսած, հայրենիքի օդն ու ջուրը չվայելած՝ նահատակեցան: Զայրելիքի սերը գիրենք նետեց պայքարի դաշտ, եւ անոնք դարձան ազատագրական պայքարի մշտավառ փարոսը, իսկ իրենց պայքարի այս ցատումով արասափեցուցին մեր թշնամի թուրքը: Լիզպոնի տղոց հոգիները 38 տարի է արդէն, որ յանդիմանեց են եւ մեզմէ անբաժան են: Տարիներէ ի վեր ես կը փափաքեի, որ իրենց յիշատակը յանդիմանող երգ մը մեկնաբանեմ, եւ այսօր այդ առիթը ընծայուեցաւ ինծի՝ «Յուշարձան Լիզպոնի նահատակներուն» երգով: Նշեմ, որ մեր շատ սիրելի Սիմոն Եահիկեանին եղբայրը՝ Զարեհ Եահիկեան, Դիմատետրի Էջիս վրայ գրած էր հետեւեալը. «Այս երգը կատարելով՝ առաջինը դուս ստացար հոգեկան բաւարարութիւն եւ ուզեցիր՝ նահատակ տղոց հոգիները ես ուրախ ըլլան, ուզեցիր՝ իրենց ըսես, որ իրենք միևնաչ չեն: Դուս չերգեցիր, որպէսզի նիւթական եկամուտ ունենաս, այլ երգեցիր, որպէսզի հայրութիւնը հոգեկան եկամուտ ստանայ»: Այս խօսքերը հոգիիս մեծ



թռիչք տուին, որովհետեւ մենք բոլորս քաջ գիտենք, որ անոնք բոլոր սերունդներուն մոլիչ ուժն են՝ պայքարելու եւ հասնելու մեր գերագոյն նպատակին: Այո՛, են նիւթական շահի համար չէ որ կ'երգեմ, այլ կ'երգեմ, որպէսզի մեր ապագայ սերունդը, մեր երիտասարդ սերունդը շարունակէ յիշել Լիզպոնի նահատակները:

Այս երգը իմ անձնական երգս չէ, լսած էի այս երգը հայրենի երգիչ Ռուստամ Գեորգեանի մեկնաբանութեամբ: Փնտռումը ետք գիտցայ, որ ասոր մտայղացումը ըրած էր Արա Նախաջարեանը, որմէ խնդրեցի արտօնութիւն՝ զայն մեկնաբանելու: Ան սիրով ընդառաջեց եւ տրամադրեց ինծի թէ՛ երաժշտութիւնը եւ թէ՛ բառերը, Սարո Թորիկեանը կատարեց երգին գործիքաւորումը, որ քիչ մը տարբեր էր իր բնօրինակէն, իսկ երգին ձայնագրութիւնը կատարեցաւ «Սթիւտի Թորիկ»-ին մէջ: Երգին տեսաւիզուկալը դարձեալ տեղադրած եմ Եութիպի եւ Դիմատետրի Էջերուս վրայ, որպէսզի բոլորին մատչելի ըլլայ եւ բոլորն ալ կարենան այս գեղեցիկ երգին ունկնդրութեան հաճոյքը վայելել:

Զարգազորյցը վարեց՝ ՄԱՐԻՆԱ ԶԱՄԱՆՏԵԱՆ

Շաբ.ը՝ էջ 6

## ԱԿՆԱՐԿ

## ՈՒՐԵՄՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ԿԱՐԵԼԻ Է ԵՂԵՐ



Պսակաժահիրի համաճարակը, իր զոհերուն եւ պատճառած ամեն տեսակի կենցաղային, ընկերային ու տնտեսական մակարդակի աղէտներուն կողքին, Լիբանանի մէջ երեւան հանեց զարմանալի ու ցարդ թացուն եւ ուսանելի, օրինակելի յատկանիշ մը՝ Լիբանանի ամբողջ ժողովուրդը պատուաստելու ծրագիրը եւ անոր բծախնդիր ու կանոնաւոր գործադրութիւնը: Այն ալ պաշտօնականտա՛ր կառավարութեան՝ պաշտօնակատա՛ր առողջապահութեան նախարարին ու յատուկ յանձնախումբին կողմէ:

Զամաճարակի առաջին օրէն, շնորհիւ այս կառավարութեան եւ առողջապահութեան նախարարին, Լիբանանի որդեգրած առողջապահական քաղաքականութիւնը եւ որոշումները օրինակելի էին: Նոյնիսկ ամերիկացիներ եւ այլ օտարահպատակներ նախընտրեցին Լիբանան մտալ, քան թէ դեսպանատուներուն կարգադրութեամբ վերադառնալ իրենց երկիրները, քանի որ Լիբանանը աւելի՛ ապահով էր... վարակումէն պաշտպանուած:

Ամէն տեսակի զգուշացում եւ կանխարգիլման միջոցներ խանգարուեցան, երբ օտար երկիրներ գտնւող լիբանանցիներուն արտօնուեցաւ վերադառնալ Լիբանան՝ յստակ պայմաններով.

ա.- Ըննութեան ենթարկուիլ իրենց գտնուած երկրին մէջ,

բ.- Պանդոկի մը մէջ մտալ որոշ ժամանակ, ենթարկուիլ լիբանանեան ըննութեան, տան մէջ ինքնամեկուսացում եւ այլն:

Այս վերադարձողներէն շատեր, ըստ իրենց «ճարպիկներ», «ապատայներ» (քաջեր), «մեզի բան մը չ'ըլլար», «համաճարակը սուտ բան է» ըսողներ, միայլ օրինակ առնելով կարծեցեալ «զարգացած» երկիրներէն, հարսանիքներու, յուղարկաւորութիւններու, ընտանեկան տօնակատարութիւններու եւ այլ արգիլած հանրային հաւաքոյթներու մասնակցելով՝ շատ արագ տարածեցին համաճարակը:

Տեղի ունեցան ամօթալի յարանուանական ենթահողով ամբաստանութիւններ, որոնք, սակայն, շուտով չքացան, երբ ամբաստանող կողմի գիւղերուն եւ քաղաքներուն մէջ նաեւ մեծ թափով տարածուեցաւ համաճարակը: Գրայ եկաւ. նաւահանգիստի պայթումը, որ իր կարգին, ստեղծուած քառսային պայմաններուն մէջ պահ մը մոռացութեան մատնելով համաճարակը, մէկ կողմ դնել տուաւ. կանխարգիլման կենսական միջոցները եւ համաճարակը սանձարձակ կերպով տարածուեցաւ մինչեւ 16 յունուար 2021-ը, երբ վարակուողներուն թիւը իր գագաթնակէտին հասաւ՝ օրական 6000-ի մօտ, մինչ առաջին օրերուն վարակումները տասնէն պակաս էին...

ՅԱՐՈՒՅ ԶԵԺԻՃԵԱՆ

Շաբ.ը՝ էջ 6

## ՊՈԼԻՍ

## ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԹԱՆԵՐ ԱՔՉԱՄԻ ԹԹԵՐԵՆՈՎ ՆՈՐ ՀԱՏՈՐԸ

Ե դ Ե ռ Ի 106-րդ տարեկիցի սեմին «Արաս» հրատարակչու ընթացեալ «Հայոց ցեղասպանութեան ամփոփ պատմութիւնը» գործը, որուն հեղինակն է Թաներ Աքչամ: Գիրքին խմբագիրներն են՝ Օնուր Զոչիդիթ եւ Ռոպեր Զոփթաշ:

Գործը Թաներ Աքչամի ցարդ հեղինակած գիրքերու շարքէն որոշ չափով կ'առանձնանայ, որովհետեւ ան փորձած է նիւթը համառօտ եւ մատչելի ձեւով մատուցել՝ ընթերցողները մտածումներու մղելու նպատակով: Աքչամ իրադարձութիւնները կը դիտարկէ պաշտօնական տեսակետներու ազդեցութենէն գերծ մնալով:

Զրատարակիչները կը մտանակնէն, որ Օսմանեան կայսրութիւնը եւ Թուրքիոյ Զանապետութիւնը կարգ մը առումներով յստակօրէն կը տարանջատուին, ունին սուր ճամբաբաժաններ, սակայն նոյն ժամանակ կարգ մը առումներով ալ ունին հետեւողականութիւն եւ շփում: Այս ոլորտներուն վերաբերեալ իրադարձութիւնները, հասկացողութիւնները եւ վեճերը վերջին տարիներուն պատմաբաններու առանձին ուշադրութեան առարկայ կը դառնան: Կայսրութենէն հանրապետութիւն անցումի ամենն սուր ու ողբերգական անկիւնադարձերէն մէկուն վրայ ի յայտ կու գայ Զայկական հարցը:



Շաբ.ը՝ էջ 6



ՆՇՄԱՐ

«ՄԵՐ ՀՈՂԵՐԸ...»



Հայաստանի կառավարութիւնը իր 22 ապրիլի նիստին քննարկած է տնտեսական ու էլեմտական հարցեր, կատարած է շարք մը տնօրինումներ։

Քննարկումները ընդգրկած են շինարարութեան, Արցախի աջակցութեան ծրագիրներ, սղաճի եւ պիտճէի հաւասարակշռումի միջոցներ եւ այլն։

Այստեղ չենք ուզեր վերլուծումի ենթարկել կամ հարցականի տակ առնել տրուած որոշումները, բարելաւումի յոյսերն ու հաւանականութիւնները, այլ կ’ուզենք առանձնացնել հետեւեալ կետը։ Որոշուած է յառաջիկայ 10 տարիներուն տարեկան 10 միլիառ դրամի (Սօտաւորապէս 20 միլիոն տոլար) աջակցութիւն տրամադրել Արցախի վերականգնումի ծրագիրներուն, որուն կ’ընդգրկեն կալուած ու բնակարան կորսնցնողներուն նորաշէն բնակարաններ տրամադրել։

Կարելի չէ գոհունակութիւն չարձանագրել նման որոշումի մասին, որովհետեւ ահա աղետեալները ձեւով մը փոխհատուցում պիտի ստանան եւ անտուն-անտեղ պիտի չմնան։ Գոհունակութեան վրայ պէտք է աւելցնել յոյսը, որ ծրագիրը իրականանայ։

Կառավարութիւնը նմանօրինակ վերաբերմունք կը ցուցաբերէ նաեւ Սիւնիքի այլ գիւղացիներուն նկատմամբ, որոնք տուն-պարտեզ-աշխատատեղի կորսնցուցին՝ ազերիներու (GPS-ով) բռնակցումներուն պատճառով։

Կորուստ ունեցողին ու անտիրական դարձածին օգնութեան ձեռք երկարելը՝ շա՛տ բարի։ Սակայն այս ընթացքը պէտք չէ մեր ուշադրութիւնը շեղէ ԷԱԿԱՆ հարցէ մը, որ է մեր կորսուած, բռնագրաւուած պատմական հողերուն տիրութիւնն ու վերստին ազատագրումը։

Արցախի կամ Սիւնիքի մէջ հող-տուն կորսնցնողին փոխհատուցում կատարելը պէտք չէ նմանի ինքնաշարժի արկածի մը կամ բնական աղետի մը (օրինակի համար՝ աւելի քան 30 տարի առաջ պատահած երկրաշարժը կամ պարտեզներ փճացնող փոթորիկ մը) պատճառով արձանագրուած վնասի դարմանումին։ Այդ գիւղացիները ո’չ միայն տուն-սեփականութիւն կորսնցուցած են, այլ մենք ալ, ա՛գգովին, անոնց հետ ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂ կորսնցուցած ենք, կորուստ, որ նման փոխհատուցումներով չի կրնար դարմանուիլ, այլ միայն ու միայն այդ հողերուն իրաւատիրոջ՝ անհատին ու ժողովուրդին վերադարձով։

... Ցեղապանութեան 50-ամեակի տարիներուն, Հայաստանի մէջ ոգեկոչական ցոյցերու պահուն, հնչեց «Մեր հողերը, մեր հողերը» պահանջը։ Այսօր, 44-օրեայ պատերազմէն ետք, Ցեղասպանութեան 106-ամեակի օրերուն, երբ թուրքին ու ազերիին ախորժակները յաւելեալ գրգռութեան նշաններ ցոյց կու տան մասնաւորաբար Չանգեզուրի ուղղութեամբ, այդ պահանջատիրութիւնը պատմականօրէն հայապատկան հողերուն նկատմամբ մեր աննահանջ կեցուածքը վերանորոգուած է եւ՝ նոր լիցք ստացած։ Ուրեմն պէտք է մեր կառավարութեան ու մեր հարցերուն բոլոր հետեւողներուն կրկին ու կըրկին յիշեցնենք, որ հայուն համար արդար լուծումը չի սահմանափակուիր միայն նիւթական կորուստներուն դիմաց փոխհատուցումով, այլ՝ ՀՈՂԵՐՈՒՆ սեփականատիրոջ վերադարձով։

Ս. ՄԱՅՄԵՐԵՃԵԱՆ

22 ապրիլ 2021

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ ԿԸ ԳՐԵՆ

ՀԱՅՐԵՆԻՔՍ

ՀԱՅԱՍՏԱՆ

Հայրենիք իմ սրբավայր, այնքան ազգեր քո մէջ մտան,

Որ սուրբերդ հեռացան:

Ուխտատեղերդ որբացան, ժամ-պատարագ չքացան,

Անոնց փոխան գերեզմաններ ուխտատեղիներ դարձան:

Հոգիս յոգնած սփիւռքի մէջ կ’ուզեմ դառնալ անվարան,

Բայց դու ինկած կը մղկտաս, տունս դարձած է վրան:

Ալեկոծուած ծովուն վրայ կը տատանիս անընդիատ,

Դեկդ տուած ես թշնամուդ, որ քու դէմքիդ կը ժպտայ:

Տուր քու ձեռքդ քո եղբորդ՝ միակ յոյսդ փրկութեան,

Օտարներուն մի՛ վստահիր, նոյնիսկ թե՛ խոստում տան:

Թէկուզ մազերս ճերմկած, երազներով տոգորուած՝

Կ’ուզեմ վերջին շունչս քեզ տալ, իմ հայրենի՛ք Հայաստան:

ՀՈՒՓՈՒՄԷ ԿՏՈՅԵԱՆ

(Ճորճիա, ԱՄՆ)

Մարտ 6, 2021

ԻՆՉՊԻՍԻ՞ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒ ՏԱԿ ԿՆՔՈՒԵՑԱՒ ՄՈՍԿՈՒԱՅԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՂԲԱՅՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԸ

Այս տարի մտադրութիւն չունէի հարկւր տարի առաջ Մոսկուայի մէջ կնքուած տխրահռչակ «Բարեկամութեան եւ եղբայրութեան» համաձայնագիրին անդրադառնալու։ Համաձայնագիր մը, որուն դառնաղետ հետեանքները ամ այսօր կը կրենք բոլորս։

Կ’ակնկալէի, որ հայրենի պատմաբաններ լիարժեք պատասխանէին թուրք-ազերիական ստաբանութիւններուն։ Չկատարուեցաւ անհրաժեշտը։ Մատի վրայ հաշուուող անաչառ պատմաբաններ արձագանգեցին։

Ազերիական մամուլը շոնդալից եւ աներեակայելի գնահատականներով արձագանգեց Մոսկուայի համաձայնագիրին՝ զայն ներկայացնելով շառաչուն հարուած հայ ժողովուրդին ծաւալապաշտական նկրտումներուն դէմ։

Բայց արդե՞ք այդ էր իրականութիւնը։

Մեր ժողովուրդի պատմութեան ամենաճակատագրական համաձայնագիրը կը կնքուէր առանց անոր ներկայացուցիչներու մասնակցութեան։ Իրաւականօրէն բանակցութիւններէն կը բացակայէր միջազգային ընտանիքէն ճանչցուած երկիր մը՝ Հայաստանի Հանրապետութիւնը։ Անոր հաշուոյն, երկու այլ պետութիւններու անունով (հորհրդային Միութիւնը այդ պահուն չէր վայելէր միջազգային ճանաչում, Մուսթաֆա Էմնալի շարժումը չէր ներկայացներ Թուրքիան) կը կնքուէր ապօրինի՝ համաձայնութիւն մը։

Ռուս-թրքական յաւերժ բարեկամութիւնը, ռուս-թուրք երկու «մեծ» ժողովուրդներուն անխախտ բարեկամութիւնը փառաբանելէ ետք, թշնամիին մամուլը, պատմական կեղծիքը ջողարկելու մտահոգութեամբ, արդարացումի փորձեր կը կատարէր, որ իբր թէ միջազգային բազմաթիւ խորհրդածողովներ վերահաստատած են տոյն համաձայնագիրին վաւերականութիւնը՝ վկայելով Բ. Համաշխարհային պատերազմի ասարտին ճշդուած սահմանները անփոփոխ պահելու 1975-ի Հելսինքիի ուխտը, որուն տակ ստորագրած էին հորհրդային Միութիւնը եւ Թուրքիան։

Ազերիական մամուլը նաեւ կը վերլիշեցներ 22 օգոստոս 1978-ին վարչապետ Սուլէյման Տեմիրլի Մոսկուա այցելութիւնը, ուր երկու պետութիւնները վերահաստատած են իրարմէ հողային պահանջներ չունենալու իրողութիւնը՝ աւելցնելով Թուրքիոյ սահմանները վերանայելու դէմ պաշտօնական Ռուսիոյ կեցուածքը։

Թուրք-ազերիական քարոզչական մեքենան կը մոռնայ, որ Կարսի համաձայնագիրը անընդունելի կը նկատուի միջազգային իրաւունքի տեսանկյան, որովհետեւ ան կնքուած է՝ միջազգային ընտանիքին պաշտօնապէս անձանօթ երկու պետութիւններու անունով՝ Ազգերու լիկայի կողմէ **տէ ֆաքթօ** ճանչցուած երրորդ պետութեան մը հաշուոյն եւ անոր քաջակայութեան... Ընթերցողին կ’արժէ յիշեցնել, որ 10 օգոստոս 1920-ին կնքուած Սեւրի հաշտութեան համաձայնագիրով Հայաստանի Հանրապետութիւնը Թուրքիոյ կողմէ կը ճանչցուէր իբրեւ ազատ եւ անկախ պետութիւն։

1969-ին Վիեննայի մէջ կայացած միջազգային խորհրդածողովէն թիւած որոշումներուն 2-րդ յօդուածի առաջին ենթաբաժինը համաձայնութիւն մը կը բնորոշէ իբրեւ «պետութիւններու միջեւ գրաւոր կնքուած եւ միջազգային իրաւունքի վրայ խարսխուած միջազգային համաձայնութիւն»։ Այսինքն անհրաժեշտ է, որ համաձայնագիր կնքող կողմերէն իւրաքանչիւրը ըլլայ միջազգայնօրէն ճանչցուած պետութեան օրինակներու կառավարութեան լիազօր ներկայացուցիչը։

Ինչպէս ծանօթ է, Մոսկուայի համաձայնագիրը կնքուած է Ռուսիոյ Սոցիալիստական Դաշնակցային Սովետական Հանրապետութեան կառավարութեան և Թուրքիոյ Ազգային մեծ ժողովի կառավարութեան միջեւ։ 16 մարտ 1921-ի դրութեամբ, Ռուսիոյ Սոցիալիստական Դաշնակցային Սովետական Հանրապետութեան կառավարութիւնը չունէր համաձայնագիր կնքելու իրաւասութիւն։ Անկիւ միայն 1924-ի-ն ԽՍՀՄ տարազով ստացաւ միջազգային օրինական ճանաչում։ Իսկ մինչեւ 1921 թուականը տեղի ունեցած «ճանաչումները» թիւած են չճանչցուած պետութիւններ։ Օրինակ, խորհրդային կառավարութիւնը 1920-ին ճանչցած է Պալեստին երկիրները, սակայն Դաշնակից ուժերը մերժած են զայն ճանչնալ, որովհետեւ խորհրդային կառավարութիւնը՝ իբրեւ պետութիւն, միջազգայնօրէն ճանչցուած չէր այդ ժամանակ։

Նոյնն էր վիճակը Թուրքիոյ Ազգային մեծ ժողովի կառավարութեան պարագային։ Թուրքիոյ օրինական իշխանութիւններուն առկայութեան քեմալականները չէին ներկայացներ Թուրքիոյ օրինական իշխանութիւնը։ Մոսկուայի համաձայնագիրը կը ստորագրէր ոչ թէ Թուրքիոյ կառավարութիւնը, այլ՝ Թուրքիոյ Ազգային մեծ ժողովը, իսկ Մուսթաֆա Էմնալը՝ իբրեւ քրեական յանցագործ, կը հետապնդուէր այդ օրերուն։ Փաստօրէն Էմնալի խմբաւորումը իրաւունք չունէր թրքական կառավարութիւնը ներկայացնելով՝ նման համաձայնագիր ստորագրելու որեւէ պետութեան հետ։

1920-ականներու կիսգրք Թուրքիոյ մէջ գոյութիւն ունէր երկու իշխանութիւն՝ Ազգային ուխտը եւ Անգարայի Ազգային մեծ ժողովի (քեմալականներ) կառավարութիւնները։

Համաձայնագիրին Հայաստանի վերաբերող հատուածը միջազգային իրաւունքի խախտում մըն է, որովհետեւ համաձայնագիր մը կրնար վերաբերիլ զայն ստորագրող կողմերուն եւ որեւէ իրաւունք չի վերապահէր անոր մաս կլազմող կամ չմասնակցող կողմերուն։ Այս հիմնադրոյթը արձանագրուած է համաձայն գրային



իրաւունքի Վիեննայի ուխտի 34-րդ յօդուածին մէջ, «A treaty does not create either obligations or rights for a third State without its consent»։

Յուլիս ամսուան (1920) ռուս-թրքական առաջին բանակցութիւններու ձախող աւարտէն վեց ամիս ետք Անգարա պաշտօնական նամակով բանակցութիւններու նոր սեղան մը պահանջեց խորհրդային իշխանութենէն։ Մոսկուա ընդառաջեց։ Ի տարբերութիւն նախորդներուն, Մոսկուա պահանջեց Հայաստանի եւ Ազրպէյճանի մասնակցութիւնը նոր բանակցութիւններուն։ Թուրքիա յօժարեցաւ։

Թուրքիոյ պատուիրակութիւնը Մոսկուա ժամանելէ առաջ Կարսի մէջ նախնական խորհրդակցական հանդիպում մը ունեցաւ Ռուսիոյ ներկայացուցիչ, ծագումով վրացի Պուտա Մոիվանիի հետ։ Այս վերջինս անմիջապէս հաւանութիւն տուաւ Թուրքիայի հայաստանէն եւ Կարսէն իրաժարելու Թուրքիոյ պայմաններուն։ Նշենք, որ Կարսի շրջանը 1878-էն ի վեր կը գտնուէր ռուսական իշխանութեան տակ։

Թրքական պատուիրակութիւնը Մոսկուայի ճանապարհին տասնօրեայ այցելութիւն մը տուաւ Պաքու։ Պատուիրակութիւնը դէպի Մոսկուա ճամբայ ելլելէ անմիջապէս ետք Ազրպէյճանի Յեղկոմի նախագահ Նարիման Նարիմանովը նամակ մը լոյց վատիմիր Լենինին՝ «**իմփերիալիստական** Հայաստանի» դէմ «յեղափոխական Թուրքիոյ» պաշտպանութեամբ։

Պէտք է արձանագրել, որ Ռուսիոյ արտաքին գործերու ժողկոմ Գերգի Վասիլեւիչ Չիչերինը, անոր տեղակալ Լեւոն Կարախանը եւ Հայաստանի մէջ Ռուսիոյ լիազօր Բ. Լեկրան ընդդիմացան Թուրքիոյ պայմանները անմիջապէս ընդունելու Մոիվանիի երաշխիքներուն, սակայն Լենին, Ստալին, Թորոքի եւ ուրիշներ պաշտպանեցին անոր հաւաստիքները։

Թրքական պատուիրակութիւնը Մոսկուա հասնելէ քանի մը օր ետք յայտարարեց, որ լիազօրութիւն չունէր խորհրդային Ռուսիոյ այլ հանրապետութիւններէն ժամանած պատուիրակութիւններուն հետ հանդիպելու։ Թուրքիոյ այս պահանջը շատ հարազատ հնչեց Մոսկուայի ականջին, որովհետեւ 18 փետրուար 1921-ին ապստամբութիւն տեղի ունեցած էր Հայաստանի մէջ։ Սիմոն Վրացեանի գլխաւորած Փրկութեան կոմիտէն չէր ճանչնար խորհրդային Հայաստանի արտաքին գործը նախարար Ալեքսանդր Բեկաւդեանի լիազօրութիւնները։ Իր կարգին, Մոսկուա մերժեց Փրկութեան կոմիտէի ներկայացուցիչին մասնակցութիւնը Մոսկուայի մէջ նախատեսուած խորհրդածողովին։ Փաստօրէն Հայաստանի հետ առնչը- և- ած բազմաթիւ հարցեր առանց անոր մասնակցութեան պիտի ընկնարկուէին Մոսկուայի մէջ։

Հայ համայնավար գործիչներ՝ Աքսնազ Մաւեան, Ալեքսանդր Բեկաւդեան, Սահակ Տեր Գաբրիէլեան Լենինէն խնդրեցին չիրաժարիլ Կարսէն, սակայն վճռական պատասխան ստացան Լենինէն. «Հասկացեք, ընկերներ՝, այս պահուն Ռուսիան չ’ուզէր եւ չի կրնար կռուիլ, մասնաւորաբար՝ Կարսի համար»։ Մաւեան իր լուշերուն մէջ գրած է, որ Լենինը թրքական քաղաք կը նկատէր Կարսը (տե՛ս)՝ դոկտ. Չաւէն Սաըրեան, «Երեք դաշնագրեր», Պէրուք, 1979, էջ 95)։

Կարսը իւրացնելու Թուրքիոյ յաւակնութիւնները կու գաւ հինէն։ Ա. Համաշխարհային պատերազմի ընթացքին Կարսի նահանգը ազատագրուեցաւ Թուրքիայէն, սակայն ռուսական բանակին հեռանալուն պատճառով դարձեալ բռնագրաւուեցաւ։ Մուտրոսի գիւնարդարէն ետք թուրքերը պարտաւոր էին հեռանալ մինչեւ 1 օգոստոս 1914-ի սահմանները։ Հայաստանի անկապտելի մաս կազմող Կարսի նահանգը պիտի վերադարձուէր Հայաստանի Հանրապետութեան։ Մուտրոսի համաձայնութեան գործադրութեան լիազօրութիւնը դրուած էր Բրիտանիոյ ուսերուն վրայ։ Հակառակ բրիտանացիներու երկդիմի քաղաքականութեան, ռուս-թրքական տարոնի սիրաբանութեան, Կարսի նահանգը վերադարձուեցաւ տիրոջը՝ Հայաստանի Հանրապետութեան։

Խորհրդածողովի նախօրէին Ստալին թրքական պատուիրակութեան խոստացաւ Հայկական հարց լքննարկել Մոսկուայի բանակցութիւններուն։ Ստալինը մինչեւ իսկ Լենինը զգուշացուցած էր, որ Չիչերինին չարտօնուի Հայկական հարցը արժարժէ խորհրդածողովի ընթացքին։ Երբ հետագային՝ 30 նոյեմբեր 1921-ին, 11-րդ բաժնը Իշէւանի ճանապարհով Հայաստանի Հանրապետութեան մայրաքաղաք մուտք գործեց, Ստալինը հեռագիրով դարձեալ զգուշացուց Սերգօ Օրջնիկիճէն եւ Բ. Լեկրանը՝ «Կարսի համար պէտք է կռուիլ քեմալականներուն դէմ»։ Խորհրդային իշխանութիւնը բացայայտօրէն Թուրքիոյ կողմ հակուած էր։ Լենին, Ստալին եւ ընկերներ տխուր դերակատարութիւն ունեցան Մոսկուայի խորհրդածողովին։

16 մարտի համաձայնագիրը ստորագրելու նախօրէին Լենին, Ստալին եւ ընկերներ բռնած էին «**իմփերիալիստական** Հայաստան»-ի դէմ «յեղափոխական Թուրքիան» պաշտպանելու ուղին։ Խորհրդային Ռուսիան արեւելքի մէջ **սոցիալիստական** յեղափոխութեան դրօշակիր կը դիտէր քեմալական Թուրքիան։

26 փետրուար 1921-ին առաւօտեան Չիչերին, առանց Հայաստանի մասնակցութեան, յայտարարեց Մոսկուայի խորհրդային-թրքական Մոսկուայի երկրորդ խորհրդածողովին պաշտօնական բացումը։ Արդէն իսկ քուլիսներու ետին լուծուած էին Հայաստանին եւ հայ ժողովուրդին վերաբերող հարցերը։ Խորհրդածողովը ձեւական քննիք կը կրէր։ Չիչերինը յայտարարեց, որ նոր դարազուլի բացուած էր ռուս-թրքական յարաբերութիւններուն մէջ։ Ան քննադատեց Սեւրի դաշնագիրը, որով Թուրքիա պիտի կորսնցներ իր մայրաքաղաքը, Փոքր Ասիոյ երկու երրորդը եւ պիտի անցնէր Անգլիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ ազդեցութեան տակ։ Չիչերինի խօսքերով, Ռուսիոյ մօտիկ բարեկամը դարձած էր ո’չ թէ Ապտիւլ Համիտի հին Թուրքիան, ո’չ թէ Պրեսթ-Լիթովսքիի Թուրքիան, այլ՝ նո՛ր վերակառուցուող Թուրքիան...

Թրքական պատուիրակութեան ներկայացուցիչ Ալի Ֆուատ փաշան Ռուսիայէն պահանջեց ճանչնալ 28 յունուար 1920-ի

ԱՅՈՐՈՆ ԾԻՐՏԵՄԵԱՆ

Շաբ.ը՝ էջ 6

ԿԱՐԻՆ ԵՐԻԱՅԵԱՆ



## ՈՒՐԵՄՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵԶ...

Շարունակում 4-րդ էջին

Անխուսափելի էր կառավարութեան կողմէ երկիրը ամբողջական փակումի ենթարկելու որոշումը՝ զսպելու համար համաճարակին աւելի աղետալի տարածումը, մինչ հիւանդանոցներուն մէջ տըր հիւանդ ընդունելու տեղ չէր մնացած:

Այս բոլորը նախարարութեան յատուկ կայքէջին միջոցով համալարգայիւն ծրագիր մը կը դեկավարէ <https://covid.pcm.gov.lb>: Այս կայքէջին միջոցով բացառիկ պարագաներու, փակ օրերուն կարելի է արտօնութիւն ստանալ տունէն դուրս ելլելու համար, քիչջային հեռաձայնով որոշ հարցարան մը լեցնելէ ետք, որ կը ճշդէ վայրը եւ ժամանակամիջոցը, որպէսզի տուեալ ժամուն տուեալ շրջանին մէջ խճողում չստեղծուի: Զրաշալի ծրագիր, որ սակայն, ըստ լիբանանեան տվորութեան, «ճարպիկներ» միշտ կը փորձեն շրջանցել այս հսկողութիւնը եւ հազարներ կը վարակեն ու կը վարակուին եւ տուգանքի կ'ենթարկուին:

Զրաշալի է յատկապէս Լիբանանի ժողովուրդը պատուաստելու ծրագրի դրութիւնը, որ արդէն գործադրութեան մէջ է: Միջազգային դրամատան օժանդակութեան շնորհիւ՝ ճրիօրէն պիտի պատուաստուին Լիբանանի բոլոր բնակիչները, նախ բոլոր բժըշկական ծառայողները, ապա՝ փուլ առ փուլ տարիքային խումբերը՝ սկսելով ամենէն տարեցէն: Պատուաստ ստանալու համար պէտք է դիմել առողջապահութեան նախարարութեան այս կայքէջին՝ [covax.moph.gov.lb](https://covax.moph.gov.lb), ուր պարզ հարցարան մը պէտք է լեցնել (արաբերէն կամ անգլերէն)՝ ծննդեան թուական եւ այլն, նախընտրած հիւանդանոցը, թէ ո՛ր կ'ուզեն պատուաստը ստանալ, որմէ ետք կը ճշդէ պատուաստ ստանալու օրը եւ ժամը:

Խորագիրիս՝ «Լիբանանի մէջ կարելի է եղեր»-ը ա՛յս դրութեան կը վերաբերի, որ առանց հրմշտուցի, առանց ազգական կամ ծանօթ ունենալու, առանց կաշառքի եւ աղաչելու՝ կառավարութենէն ծառայութիւն մը կը ստանանք, եւ ստացայ, այն ալ՝ բոլորովին ճիշդ: Իսկ ամենամեծ անակնկալը հետեւեալն էր. հարազատի մը ճշդուած թուականը տոսական օր-ւան մը զուգահայելով, նախարարութենէն քիչջայինին կարճ նամակ մը եկաւ՝ յայտնելով, որ ժամադրութիւնը 3 օրով առաջաձգուած է՝ տալով տըր թուականը, եւ ոչ միայն այսքան... Նախորդ թուականէն օր մը առաջ կրկին յիշեցում կատարուեցաւ, որ թուականը փոխուած է, որպէսզի զուր տեղը պատուաստի չերթայ... անհաւատալի, բայց՝ իրաւ:

Զետեաբար ամբողջովին զօրավիճ կը կանգնիմ այս պաշտօնակատար կառավարութեան: Զաղաքացին յարգելու այս մօտեցումը օրինակ պէտք է ծառայէ բոլո՛ր նախարարութիւններուն:

Արեւմտեան զարգացած երկիրներու մէջ ապրող ծանօթներէս շատեր տակաւին պատուաստի կը սպասեն եւ չեն գիտեր, թէ ե՛րբ եւ ինչպէ՛ս իրենց պատուաստը պիտի ստանան:

8 մայիս 2021

[haroutchekijian.wordpress.com](https://haroutchekijian.wordpress.com)

## ԻՆՉՊԻՍԻ՞ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒ ՏԱԿ...

Շարունակում 5-րդ էջին

Թուրքիոյ Ազգային ուխտը, որուն համաձայն, իբրեւ Թուրքիոյ տարածութիւն անկրածշտ էր ճանչնալ Մուստրոսի համաձայնագիրը կընքուած պահուն (30 հոկտեմբեր 1920) անոր սահմանները: Փաստօրէն ամբողջ Արեւմտահայաստանը եւ Կիլիկիան բռնագրաւելէ ետք Թուրքիան կը յափշտակեր Կարսի, Արտահանի եւ Պաթումի շրջանները:

Ռուսիոյ կառավարութիւնը, խախտելով միջազգային բոլոր հասկացութիւնները, ապօրինաբար չեղեալ կը յայտարարէր օտար պետութիւններու հետ Թուրքիոյ օրինաւոր կառավարութիւններուն ստորագրած համաձայնագրերը:

Մուսթաֆա Զեմալը մէկ կողմէ «Դէպի Արեւմուտ» կարգախօսով Արեւմուտքի պետութիւնները կը սիրաշահէր, միւս կողմէ՝ խորհրդոյային Ռուսիան: Զեմալը ոչ միայն իրացուց Կարսը, Արտահանը, այլեւ զէնք, ռազամիթերը եւ ոսկի ստացաւ, որպէսզի շարունակէ կոտորել յոյները, հայերը եւ մնացեալ փոքրամասնութիւնները:

Սեւ ծովու եւ նեղուցներու անվտանգութեան վերաբերեալ թրջական երաշխիքները Արեւմտեան Զայաստանի տարածութիւններէն շատ աւելի ռազմավարական նշանակութիւն ունեին խորհրդային Ռուսիոյ իշխանութիւններուն:

Կարսի յանձնումին առթիւ խորհրդային եւ արտասահմանեան բազմաթիւ պատմաբաններ այն կարծիքը յայտնած են, որ ռուսերը Կարսը «նուիրեցին» թուրքերուն, որպէսզի պատժեն ապստամբ վիճակի մէջ գտնուող Զայաստանը: Զիմբեր ունենալով հանդերձ, նման վարկած մը չէր Կարսը թուրքերուն յանձնելու պատճառը:

Մուսկուայի «Բարեկամութեան եւ եղբայրութեան» համաձայնագիրը Զայաստանը կը զրկէր Մուստրոսի, Փարիզի, Լոնտոնի եւ Սեւրի համաժողովներուն ստացած իրաւունքներէն եւ կը դնէր ծանր իրողութեան առջեւ:

Սուգի մէջ էր հայ ժողովուրդը: Զրեմիկին բոլոր ներկայացուցին Աւետիս Ահարոնեանը, Պօղոս Նուպար փաշան, Եգիպտահայերը, փարիզահայերը, սփիւռքի բոլոր զանգուածները, բայց՝ ի զուր:

Այսպիսի վախճան եւ հետեւանք ունեցաւ Մուսկուայի ազգադաւ, խայտառակ խորհրդաժողովը:

«ԱԶԴԱԿ»Ի ԱՐԱԲԵՐԻՆ ԿԱՅՔԷԶԸ  
[www.aztagarabic.com](http://www.aztagarabic.com)

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ...

Շարունակում 4-րդ էջին

Աքջամ, որ շուրջ երեսուն տարիէ ի վեր իբրեւ պատմաբան խոշորացոյցի տակ առած է այս նիւթը, ներկայ գիրքին մէջ թէեւ ամփոփում մը կը մատուցէ, սակայն ընդհանուր շրջանակ մըն ալ կը զօ՛՛Է՝ բիւրեղացնելու համար 1878-1923 ժամանակաշրջանին վերաբերեալ ընկալումները: Օսմանեան կայսրութեան մէջ գրեթէ չօրս բնակիչներէն մին քրիստոնեայ էր: Այսպիսի ժողովրդագրական իրականութենէ մը ետք, ըստ իրատարակիչներուն, Ցեղասպանութիւնը հայոց հետ սահմանափակ չէ մնացած, եւ գործընթացը այնպիսի հետեւանքներու ծնունդ տուած է, որ քրիստոնեայ տարրերը ընկերային եւ մշակութային առումով

ոչնչացուած են: Հանրապետական շրջանի քաղաքականութիւններով այս գործընթացը տեականացուած է զանազան միջոցներով: Առ այդ, մերօրեայ Թուրքիոյ ընկալման տեսանկիւնէն ալ այս բոլորը ունին բանալիի նշանակութիւն:

Աքջամի այս գիրքը օսմանեան պետութեան քրիստոնեայ բնակչութեան՝ համակեցութենէն դէպի ոչնչացում տարուիլը կը բացատրէ, որոշումներ տուած ենթականերով հանդերձ: Զրատարակիչները կը մատնանշեն, որ փորձառու պատմաբանը այս բոլորը մատչելի կառուցուածքով մը ընթերցողին կը ներկայացնէ իր հարուստ պաշարով:

## «ՎԱՐԱԳԱԹԱՂԻ ԱՐԾԻՒՆԵՐՈՒՆ»...

Շարունակում 4-րդ էջին

«Ա.».- *Ի՛նչ նշանակութիւն ունի ազգային-հայրենասիրական երգը ձեզի համար: Ձեր կարծիքով, անոնք կը ծառայէ՞ն ազգապահպանութեան:*

Ա. Կ. Ա.- Ազգային հայրենասիրական երգը, ոչ թէ կը պահպանէ ազգը, այլ ազգին միջոցով կը պահպանէ ազգային մշակոյթը: Ազգային հայրենասիրական երգը՝ իբրեւ այդպիսին, կը ծառայէ նաեւ ազգային մշակոյթին, հետեւաբար թէ կայ ազգային մշակոյթ, ուրեմն գոյութիւն ունի նաեւ համապատասխան ազգը: Այսօր, օրինակի համար, մեզի չէ հասած ասորական մշակոյթը, ճիշդ անոր համար է, որ իրենք մնացած են յայտնի եւ անյայտ ազգերու ոչնչացման եւ տեղահանման այդ ընթացքին մէջ եւ մինչեւ տեղահանութիւն, այլ պատերազմներու, անոնք ոչնչացան եւ իրենց հետ ոչնչացաւ իրենց ազգային մտածելակերպը, իրենց ազգային, հոգեւոր երգը եւ այդ պատճառով իրենց ազգը կործանեցաւ: Սովորաբար ազգային երգը ի՛նքը ազգի պահպանման բնագոյնին հարցերուն լուծումն է եւ, իբրեւ այդպիսին, թէ մշակոյթ չունիս, ուրեմն խօսիլ ազգի մասին՝ նման է չխօսիլ որեւէ բանի մասին: Զիմանկանօրէն երգով փոխանցուած են միշտը, ցաւը, ուրախութիւնը, եւ երբ այսօր մենք մեր տատիկներուն ու պապիկներուն բերնէն կը լսենք «Տլէ եաման»-ը, կը հասկանք, որ տարիներ առաջ այդ «Տլէ եաման»-ը իրականութիւն եղած է: Այսօր, երբ կը լսենք ուրախութեան երգեր, կը հասկանք նաեւ, որ ինչ-որ տեղ մը մեր ազգը ուրախանալու արժէք ունեցած է: Այդպէս է, որ ազգային երգը, ազգային մշակոյթը կը պահպանուի, որուն միջոցով մենք նաեւ կը պահպանենք մեր ազգը: Զետեաբար մենք պէտք է կառչած մնանք մեր ազգային երգերուն, հայրենասիրական երգերուն, ժողովրդական երգերուն, գուսանական երգերուն, ազգագրական երգերուն, որոնք մեզի կը ձգեն, որ մենք ապրինք, իբրեւ հայ՝ կառչած մնանք մեր հողին, մեր հարուստ մշակոյթին, որովհետեւ առանց ազգային մշակոյթի հետ կապ ունենալու՝ անկարելի է մնալ հայ, իսկական հայ:

«Ա.».- *Խօսեցէ՛ք ձեր ապագայի ծրագիրներուն մասին, եթէ կան:*

Ա. Կ. Ա.- Նախքան խօսիլս ապագայ ծրագիրներուն մասին՝ պիտի ուզեմ նաեւ մեր ընթերցողներուն ըսել, որ ես նաեւ ունիմ «Շէնկիցի Շաքեն» Սասունի բարբառով շատ գեղեցիկ ազգագրական երգը, որուն խօսքը կը պատկանի ընկեր Ռումիկ Մարգարեանի, երաժշտութիւնը՝ Մուրատ Մշեցիի, իսկ երաժշտութեան մշակումը կատարած է հայրենի արուեստագետ Զայկ Նաւասարդեանը: Օրին այս երգն ու տեսա-հովովակը պատրաստեցինք եւ տեղադրեցինք Եութիւպի վրայ: Շատ գեղեցիկ երգ է. երգը նաեւ իր իմաստը ունի՝ շէնկիցի Շաքեն այն գեղեցիկ կիսն ու ֆետային է, որուն կը սիրահարին դրացի գիւղի երիտասարդները, սակայն չեն կրնար անոր նայիլ անգամ: Մեր ֆետայական օրերէն հասած երգ է: Նաեւ ունիմ Արթուր Կարապետեանի յիշատակին երգը, որ ազգային բնոյթ ունի, եւ որուն իրագործումին համար ծայնի ընկերակցութիւնը կատարեց մեր շատ սիրելի հայրենի երգիչ, ազգային յեղափոխական երգերու մեկ-նաբան Սկրտիչ Մկրտիչեանը՝ Մակիչ: Ապագայ ծրագիրներ միշտ կան, միշտ մենք կը փափաքինք լաւագոյնը տալ, երաժշտութեամբ ապրիլ, որովհետեւ աշխատանքն ու երգը կ'ազնււացնեն հոգին, մարդու ներաշխարհը կը լիացնեն: Երգով ապրիլ՝ կը նշանակէ երկար ապրիլ, հարուստ ապրիլ, իբրեւ մարդ գոյութիւն ունենալ: Երգը տրամադրութիւն կը բարձրացնէ, կորով կը ներշնչէ, յոյս կու տայ: Մենք պիտի շարունակենք երգել հայրենի որակաւոր երգեր եւ մեր երգերը փոխանցել յառաջիկայ սերունդներուն:

## Կ՝ՈՒԶՈՒԻ

Հաստատութիւն մը կարիք ունի վարպետ կաղապարագործներու (**թթրտծի**):

Դիմել՝ հեռ. 03-244967:



ՆՅՍՕՐ՝ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»-ԷՆ

Radio Voice of Van - Վանայ Զայն FM: 94.7 եւ 95 MHz

7.00 Զայլերգներ / Բարի լոյս  
7.15 Սփիւռքեան հանդարտ երգեր  
7.30 Բարեւ  
**8.30 Լուրեր**  
9.00 Բարեւ  
10.00 Սփիւռքեան երգեր  
**10.30 Յայկական աշխարհի լուրեր (ուղիղ՝ դիմատեսքով)**  
10.45 Հայրենի խանդավառ երգեր  
11.30 «ԳՈՅԱՐ» համոյթի կատարումներ  
12.30 Նոր երգեր  
1.00 Ազգային-հայրենասիրական երգեր  
**1.30 Լուրեր**  
2.00 Յիշատակելիները (Արցախեան Նորոյեայ հերոսներ)  
2.05 Յեղափոխական երգեր  
3.00 Զըլ եւմ պիոյմու. հիւր՝ դուկտ. Իմատ Ռըզ  
4:00 Գրական անդաստան (Յովհաննէս Շիրազի Անիի Նուիր-աձ բանաստեղծութիւնները)

**4.30 Օ. Թի. Վի.-ի հայերէն լուրերու ուղղակի սփռում**  
4.50 Խանդավառ երգեր  
5.00 «Վանայ Զայն»-ը երեկոյեան  
5.05 Ունկնորութեան վայելքը (Պարմէն Աճեմեանի հետ)  
5.30 Լաւագոյն երգեր Յարութ Փամպուքեանէն ու Ատիս Զարմանտեանէն  
**6.30 Լուրեր**  
6.50 Հայրենի խանդավառ երգեր  
8.00 Օրուան երգիչ (Աստղիկ Սաֆարեան)  
8.30 Radio Jazz  
**9.30 Հայկական աշխարհի լուրեր (կրկ.)**  
9.45 Էսորատային երգեր  
11.00 Աշուղական երգեր  
12.00 Յեղափոխական երգեր  
**2.00 Կրկնութիւններ**  
4.00 Հայերէն այլազան երգեր  
6.00 Հայկական երաժշտութիւն

«Վանայ Զայն»-էն սփռուող բոլոր յայտագիրները կարելի է գտնել եւ ունկնորել ռատիոկայանի կայքէջին արխիւներ բաժնին մէջ ([voiceofvan.net](http://voiceofvan.net)):

[www.homenetmenlebanon.com](http://www.homenetmenlebanon.com)

## ԺԱՄԱՆՅ

### ԽԱՉԲԱՆ

|    | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
|----|---|---|---|---|---|---|---|---|---|----|----|
| 1  |   |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 2  |   |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 3  |   |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 4  |   |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 5  |   |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 6  |   |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 7  |   |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 8  |   |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 9  |   |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 10 |   |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 11 |   |   |   |   |   |   |   |   |   |    |    |

#### ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ

- Մահ մեծ, օրիասական - Նաեւ:
- Դ. դարու հերետիկոս - Կարմիր ծովու ծոցերէն:
- Կշիռ ունեցող - Վշտահար, տրտում:
- Յատկութիւն - Արական օտար անուն:
- Ծօլօրիկ, ճօճանոց - Լեցուն:
- Անականա կերտ մաւնիկ:
- Ժխտա կան պատախան - Մեղքերու թողութեան վայր:
- Իգա կան օտար անուն - Այլ ունեցող:
- Անի ռիկեան երկիր - Ամուսնական կապերով ազգական:
- Յուսան կերտ մաւնիկ - Նուագարանի լար - Արական օտար անուն:
- Հատուած - Լաւենի, առուոյտի տեսակ:

#### ՈՐԴԱՐԱՅԾԱՅ

- Փակցնելու նիւթ - Զարթու, աշտուճ:
- Լեչեռական ռազմաճակատ - Զորիչուն:
- Չիտուորական ծառայութեան կանուած անձ:
- Ցորէկի ծեծած - Ցանցառ:
- Իրերայաջորդ տաւեր - Կանացի կոշական բառ:
- Համեմային եւ բուժական բոյս մը:
- Հայտ պատկան տաւած՝ Ազրպեյճանի մէջ:
- Խուտան, գձուճ - Արցախի ննավայրերէն:
- Մեղմ հով - Ստակ:
- Ամուսնուն մը - Ցուցական դերանուն:
- Ձախանիշ - 2000-ի Ողիմպիականները հիպընկալած ջաղաջը - Առարկայ:

Պատրաստեց՝ **Տ. Մ. ԱՐԱՋԱՐԵԱՆ**

### ՍՈՒՏՈՔՈՒ

| 3 | 4 |   | 7 |   |   | 9   |
|---|---|---|---|---|---|-----|
|   |   |   |   | 1 | 4 |     |
|   |   |   |   |   |   |     |
|   |   | 8 |   |   |   | 6 4 |
| 4 |   | 5 |   | 6 |   |     |
|   |   | 3 | 2 |   | 5 | 6   |
|   |   |   |   | 4 |   | 3   |
|   |   |   |   |   |   | 5   |
| 2 | 7 |   |   |   | 9 |     |
|   |   | 1 | 8 |   |   |     |
|   | 8 |   |   |   |   |     |
|   |   |   |   | 9 |   | 3 1 |

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գնացանցը բաղկացած է իւրաքանչիւր 9 ջատարանի հաշուող 9 բաժինների (9x9): Բացառումի սկզբունքին կիրառումով իւրաքանչիւր ջատարանի մէջ թաանշում մը գետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 ջատարանի մէջ իւրաքանչիւր բաժին ունենայ ձեւ 9 թաանշումներ՝ իւրաքանչիւր թաանշում միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով՝ ո՛չ մէկ պարագայի արտօնուած է թաանշում մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժնին մէջ: Սկսելու համար՝ կարգ մը թաանշումներ իրենց ձգորիս ջատարաններուն մէջ գետեղուած են:

#### ՆԱԽՈՐԴ ԺԱՄԱՆՅԻ ՆԱԳԵՐՈՒՄ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

|    | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
|----|---|---|---|---|---|---|---|---|---|----|----|
| 1  | Պ | Ա | Ս | Կ | Ա | Դ | Ա | Ս | Կ | Պ  |    |
| 2  | Ա | Պ | Օ | Զ | Ե | Վ | Ա | Ս | Կ | Պ  |    |
| 3  | Ս | Ա | Պ | Ե | Ա | Դ | Ձ | Յ | Վ |    |    |
| 4  | Ա | Ս | Կ | Պ | Ե | Պ | Լ | Դ | Խ | Խ  |    |
| 5  | Ա | Ս | Կ | Պ | Ե | Պ | Լ | Դ | Խ | Խ  |    |
| 6  | Դ | Ձ | Լ | Դ | Ա | Մ | Դ | Մ |   |    |    |
| 7  | Ա | Ս | Կ | Պ | Ա | Դ | Խ | Ձ | Ա |    |    |
| 8  | Ա | Պ | Օ | Զ | Ե | Վ | Ա | Ս | Կ | Պ  |    |
| 9  | Ա | Ս | Կ | Պ | Ե | Պ | Լ | Դ | Խ | Խ  |    |
| 10 | Ա | Ս | Կ | Պ | Ե | Պ | Լ | Դ | Խ | Խ  |    |
| 11 | Ա | Պ | Խ | Զ | Յ | Խ | Խ | Խ |   |    |    |







## ԱՆԳԱՐԱՅԻ ՄԵՋ ԻՐԱՆԻ ԴԵՍՊՈՒՆԱՏՈՒՆԸ ԿԸ ՅԵՐՔԷ ԵՄԵՆ ՍՈՒՐԻԱՅԻ ՎԱՐՁԿԱՆՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԼՈՒՐԸ



Անգարայի մէջ Իրանի դեսպանատունը հերքած է թրքական պետական «Անատոլու» լրատու գործակալութեան հրապարակած այն լուրը, թէ Իրանը սուրիացի վարձկաններ կ'ուղարկէ Եմեն: Այս մասին կը հաղորդէ «Թեհրան Թայմզ» օրաթերթը: «Այս կեղծ պնդումը կը հակասէ Եմենի ժողովուրդին դէմ աղետալի եւ անմարդկային պատերազմին մէջ Իրանի մօտեցումին: Իրանը միշտ ալ կոչ ուղղած է դադրեցնելու պատերազմը եւ աջակցած է հարցին լուծման համար քաղաքական լուծում գտնելու նպատակով ՄԱԿ-ի ջանքերուն», նշուած է դեսպանատան հրապարակած յայտարարութեան մէջ:

## ՆԱԽԱԳԱՅ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍԵԱՆ...

Շարունակուած Ա. Էջեն

Վարչապետի ընտրութեան համար անհրաժեշտ էր 67 թեր քուէ:

Անկախ Հայաստանի պատմութեան մէջ երկրորդ անգամն է, որ Ազգային ժողով կ'արձակուի սահմանւած ժամկետէն շուտ: 2018-ի նոյեմբերին եւս Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի հրաժարականէն ետք խորհրդարանը ցրուած էր նոյն ընթացակարգով:

Ալեյի ուշ, Հայաստանի Հանրապետութեան նախագահի աշխատակազմի հասարակութեան հետ կապերու վարչութիւնէն տեղեկացուցին, որ նախագահ Արմէն Սարգսեան ստորագրեց 20 յունիսին Ազգային ժողովի արտահերթ ընտրութիւն կատարելու մասին հրամանագիր:

«Հիմք ընդունելով Սահմանադրութեան 92-րդ եւ 93-րդ յօդուածներու պահանջները եւ հաշուի առնելով Սահմանադրութեան 149-րդ յօդուածի 3-րդ մասին համաձայն Ազգային ժողովի՝ իրաւունքի ուժով արձակումը:

1.- Ազգային ժողովի արտահերթ ընտրութիւնը նշանակել 20 յունիս 2021-ին:

2.- Սոյն հրամանագիրը ուժի մէջ կը մտնէ պաշտօնական հրապարակման յաջորդող օրէն», նշուեցաւ հաղորդագրութեան մէջ:

## ՍՈՒՐԱՏ ՓՈՓԱՉԵԱՆ. «ԷՄԱՆՈՒԷԼ...»

Շարունակուած Ա. Էջեն

Ան «Թերթ»-ին հետ գրոյցի մը ընթացքին նշեց, որ Ֆրանսայի նախագահը այսօր ալ համոզուած է, որ այսօր եւ վաղն ալ կայ առիթ շարունակելու բանակցութիւնները եւ բարելաւելու եռակողմանի համաձայնագիրը, այն պայմանով, որ Հայաստանն ալ աշխուժ քաղաքականութիւն եւ դիւանագիտութիւն ունենայ:

«Երբ մենք կը պայքարէինք, որ Ֆրանսան կամ միջազգային հանրութիւնը ճանչնայ Արցախի անկախութիւնը, Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութիւնը կ'ըսէր, որ Հայաստանը չի ճանչնար, ինչո՞ւ պէտք է մենք ճանչնանք», ըսաւ ան:

Սուրատ Փափագեան ըսաւ, որ ապրիլի 24-ին Ելիզեի պալատին մէջ նախագահ Մաքրոնի հետ հանդիպումին քննարկած են Ազրպէյճանի մէջ պահուող հայ ռազմագերիներու հարցը: Ան տարակուսանք յայտնեց, թէ ինչո՞ւ միկէն հիմա Հայաստանը չէ կըրցած լուծել այդ հարցը՝ հակառակ անոր, որ եռակողմանի համաձայնագիրը կը նախատեսէր բոլոր գերիներուն վերադարձը:

«Հայաստանը ինչո՞ւ բոլոր գերիները ազատ արձակեց: Ինչո՞ւ: Ատիկա դիւանագիտական եւ քաղաքական մեծ սխալ է: Պատանին այդ սխալը չէր կատարէր: Ազատ պէտք է արձակէր, երբ ազրպէյճանական կողմը բոլորը ազատ արձակէր: Հիմա Հայաստանը ճնշման ոչ մէկ լծակ ունի», ըսաւ ան:

## ՓՈՒԹԻՆ - ԱԼԻԵՒ ՀԵՌԱԶԱՅՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին հեռաձայնով զրուցած է Ազրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ: Այս մասին կը հաղորդէ Զրեմկինի մամուլ ծառայութիւնը:

«Հաստատուած է ռուս-ազրպէյճանական համակողմանի փոխադարձ գործակցութեան ընդլայնման փոխադարձ տրամադրուածութիւնը: Տարբեր մակարդակներով հետագայ հաղորդակցութիւններուն վերաբերեալ համաձայնութիւն գոյացած է», նշուած է

հաղորդագրութեան մէջ:

Հեռաձայնային հաղորդակցութեան ընթացքին Փութինն ու Ալիեւը գիրար քերթօրէն շնորհաւորած են Համաշխարհային Բ. պատերազմին արձանագրուած յարդանակի 76-ամեակին առիթով՝ նշելով, որ երկու երկիրներուն մէջ ալ սրբօրէն կը յարգեն մարտիկներու սխրանքի յիշատակը եւ խորապէս շնորհակալ են վթերաններէն, որոնք անմնացորդ հերոսութիւն եւ անձնուիրութիւն դրսեւորած են:

## ՉՕՐԱԿՑԵԼՈՎ ՀԱՆԳՍԵԱՆ ԿՈՉՈՒՄԾ ՉՕՐԱԿԱՐՆԵՐՈՒ ԲԱՑ ՆԱՄԱԿԻՆ՝

## ՖՐԱՆՍԱՅԻ ԶԻՆՈՒՐԱԿԱՆՆԵՐ ԲԱՑ ՆԱՄԱԿ ՅՂԱԾ ԵՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ՝ ԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՎ ԵՐԿՐԻՆ ՄԵՋ ԲԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎՏԱՆԳԵՆ

Ֆրանսական «Վալտօր Աքթիւէ» շաբաթաթերթը հրապարակած է ուղերձը խումբ մը ֆրանսացի գործող զինուորականներու, որոնք հանդէս եկած են ի պաշտպանութիւն հանգըստեան կոչուած զօրավարներու՝ երկրի իշխանութիւններուն նախապէս յղած բաց նամակին: Այս մասին կը հաղորդէ ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը:

Նամակին հեղինակները, որոնց անունները չեն նշուիր, դատապարտած են Ֆրանսական իշխանութիւններուն արձագանգը հանգստեան կոչւած զօրավարներու՝ երկրին մէջ իսլամականներուն պատճառով գոյութիւն ունեցող քաղաքացիական պատերազմի վտանգի մասին նամակին:

«Անոնց հետ վերաբերուած են ինչպէս ապստամբներու հետ, երբ անոնց միակ մտքը իրենց երկրին նկատմամբ սերն է: Մենք մեր քաղաքներուն եւ գիւղերուն մէջ բռնութիւն կը տեսնենք: Մենք կը տեսնենք, որ Ֆրանսայի եւ անոր պատմութեան նկատմամբ առեւթիւնները տոկորական երեւոյթ դարձած է: Գործեցէ՛ք, խօսքը մեր եւ ձեր երկրին գոյատեւման մասին է», նշուած է նամակին մէջ, որուն հեղինակներուն կարծիքով՝ Ֆրանսայի մէջ «արդէն քաղաքացիական պատերազմ սկսած է»:

Նշենք, որ «Վալտօր Աքթիւէ» ամսագիրը 20 հանգստեան կոչուած զօրավարներու բաց նամակը հրապարակած էր ապրիլից:

Նամակին մէջ կը խօսուի քաղաքացիական պատերազմի սպառնալիքի մասին, որ, անոնց համաձայն, երկայ վերածուիլ լարուածութեան եւ հասարակութեան պառակտման: Ֆրանսայի զինեալ ուժերու սպայակոյտի պետ, գոր. Ֆրանսուա Էքրենթօ «Լը Փարիզիէն» օրաթերթին հետ հարցազրոյցի ընթացքին յայտարարած էր, որ բաց նամակի հեղինակ հանգստեան կոչ-

ւած զօրավարներուն դէմ պատժամիջոցներ պիտի կիրարկուին:

ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը, յղում կատարելով «Սիւտ Ռատիօ» ձայնասփիւռի կայանին, հաղորդեց, որ Ֆրանսայի տնտեսութեան, էլեմուտքի եւ վերականգնման նախարարութեան կից արդիւնաբերութեան հարցերով նախարար-պատուիրակ Անիէս Փանիէ Ռիւնաշէ յայտնած է, որ Ֆրանսայի մէջ ծառայութեան մէջ գտնուող զինուորներէն կառավարութեան ուղղուած դիմում-խնդրագիրները քաղաքականացուած են եւ իրականութեան մէջ ուղղւած են կարգի տալովման եւ ոչ թէ պաշտպանութեան:

«Ատիկա անանուս դիմում է, այնպէս որ մենք չենք գիտեր, թէ որո՞ւ կողմէ կու գայ: Բացի ատկէ, ատիկա քաղաքական գրութիւն է, որ կը հակասէ զինուորական ծառայութեան սկզբնականներուն», յայտարարած է Փանիէ Ռիւնաշէ:

Պաշտօնատարին համաձայն, Նոր նամակին հեղինակները «կ'օգտագործեն ծայրայեղ աջ ուժերու եզրերը, ինչպէս որ կը վարուի Մարին Լը Փենի դէպակարած «Ազգային ճակատ» կուսակցութիւնը:

«Փաստեր նշելը բան վնաս է, իսկ կարգը պաշտպանելու պատրուակով անկարգութիւններու կոչ ուղղելը՝ այլ բան, ինչ որ տողատակի կը հասկցուի տուեալ խնդրագիրին մէջ», վստահ է նախարար-պատուիրակը:

Ան նշած է, որ անվտանգութեան հարցը արդիական է նախ եւ առաջ համեստ եկամուտ ունեցողներուն համար, որովհետեւ ճիշդ անոնք ամենն յաճախ կը բախին նման խնդիրներու: Ան վստահեցուցած է, որ կառավարութիւնը ամեն ինչ կ'ընէ իր քաղաքացիները պաշտպանելու համար:

## ՀԱՐԻՐԱՒՈՐ ՊԱՐԵՍԻՆՑԻՆԵՐ ԿԸ...

Շարունակուած Ա. Էջեն

կազմակերպութեան տուեալներով՝ ոստիկանութիւնը դաժանօրէն վարւած է հաւաքուած իսլամ հաւատացեալներուն նկատմամբ, որոնք Աքսա մզկիթին մէջ հաւաքուած էին ռամատանեան ընթացիկ աղօթքները կատարելու:

Երուսաղէմի Աքսա մզկիթի տնօրէն Օմար Բետուանին աջակցութեան համար դիմած է իսլամական աշխարհին՝ յայտնելով. «Իսլամական աշխարհը կը յորդորենք օգնել Աքսա մզկիթին՝ հրեայ վերաբնակիչներու եւ իսրայէլացի ոստիկաններու կողմէ մզկիթին վրայ յարձակելէ ետք»:

Պաղեստինի կրօնի գործերու նախարարութեան աղբիւրը մամուլին հաղորդած է, որ Իսրայէլի ոստիկանութիւնը գրաւած է Աքսա մզկիթի բոլոր բանալիները:

Կազայի հատուածէն եօթը հրթիռներու արձակման պատճառով Երուսաղէմի եւ Պէյթ Շեմի մէջ գործի դրուած է օդային տաակապի ազդանշանը:

Իսրայէլի բանակի լրատուական ծառայութեան յայտնած են, որ հրթիռներէն մէկը որսացած է «Երկաթեայ գմբէթ» հակահրթիռային համակարգը:

Պաղեստինեան «Համաս» խմբաւորման զինուորական թեւի ներկայացուցիչ Ապու Օպայտա ալեյի կանուխ յայտարարած էր, որ Իսրայէլը մինչեւ ժամը 18:00-ը ժամանակ ունի զօրքերը դուրս բերելու բռնագրաւեալ Արեւելեան Երուսաղէմի Աքսա մզկիթի եւ Շէյխ ժարրահ թաղամասի շրջաններէն:

## ԷՐՏՈՂԱՆ ՅՈՅՆ ՈՒՂԱՓԱՌՆԵՐՈՒ ԲԱՐԹՈՂԻՄԵՆՈՍ Բ. ՊԱՏՐԻԱՐԷՆ ՅԱՅՏՆԱԾ Է, ՈՐ ՅՈՅՆԵՐԸ ՊԵՏԵ Է ՎԵՐԱՂԱՌՆԱՆ ԹՈՒՐԷԻԱ

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան Կոստանդնուպոլսոյ պատրիարք Բարթողիմէոս Բ.-ին ըսած է, որ կ'ողջունէ յոյներու Թուրքիա վերադարձը:

Ըստ թրքական «Սապահ» օրաթերթին, անցեալ չորեքշաբթի հոգեւոր առաջնորդներու համար կազմակերպուած **հիֆթաի** ընթրիքը Էրտողանի համար առիթ էր նախորդ տասնամեակներու ընթացքին Թուրքիայէն «հեռացած» յոյները հայրենիք վերադառնալու հրաւիրելու:

Ուրբաթ օր գրեթէ բոլոր թրքական օրաթերթերը յայտնած էին, որ շատ լաւ, մտերմիկ եւ ջերմ մթնոլորտ եղած է Թուրքիոյ կրօնական փոքրամասնութիւններու ղեկավարներուն հետ հանդիպման ժամանակ, եւ Թուրքիոյ նախագահը «գրկախառնուած է փոքրամասնութիւններուն հետ»:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ...

Շարունակուած Ա. Էջեն

կողմը դեռ վերականգնելի շատ բան ունի: Այլպէս այս եզրաքանութիւնը կը նպաստէ Ալիեւի կատարած յայտարարութեան՝ Արցախի խնդիրը անցեալ է արդէն: Յետհակամարտայինը ուրեմն չի բխիր հայկական կողմի շահերէն:

Վերջերս թէ՛ խորհրդարանական եւ թէ՛ գործադիր մակարդակներու վրայ ամենէն բարձր ամպիոններէ կը ինչէ «անշատում փրկութեան դիմաց» բանաձեւը: Հասկնալի է, որ այս բանաձեւը ցեղասպանական տարր կը ներառէ իր մէջ: Միտքը այն է, որ Արցախի ժողովուրդը պէտք է անջատուի Ազրպէյճանէն՝ ցեղասպանութեան չենթարկուելու համար: Այս մօտեցումը կը նպաստէ Ազրպէյճանի ցեղասպանական դիմագիծը բացայայտելու համար եւ կը շեշտէ Արցախի եւ Ազրպէյճանի անհամատեղելիութիւնը: Սակայն...

Երբ Ազրպէյճանէն անջատում կ'ըսուի, այդ կ'ենթադրէ, որ Արցախը պէտք է տարանջատուի, անկախանայ Ազրպէյճանէն, որուն իրաւականօրէն երբեք մաս չէ կազմած. ո՛չ 1918-ին, ո՛չ ալ 1991-ին: Արցախը պարզապէս բռնակցուած է Ազրպէյճանին ստալինեան որոշումով, իսկ բռնակցումը միջազգային իրաւունքով ճանաչելի **աքթ** չէ: Այս է հայկական կողմին մօտեցումը, անկախ անկէ, որ կրնայ հաշտ չլլալ միջազգային ընտանիքին համար: Ի վերջոյ Ազրպէյճանի տարածքային ամբողջականութեան սկզբունքը հայկական կողմին համար կ'ենթադրէ առանց Արցախի Ազրպէյճան, որուն սահմաններուն մէջ չէր ներառուած Արցախը: Արցախը անկախացած է հորիորդային Միութեան փլուզումով, ինչպէս անկախացած են հորիորդային Միութեան նախկին երկիրները: Հանրաքուէով, ինչպէս տարբեր երկիրներ:

Պաքուն, որոշ ժամանակ ետք փախստական եզրը օգտագործելէ ետք Արցախի մէջ ապրած եւ պատերազմէն ետք Ազրպէյճան հաստատուած իր համաքաղաքացիները դասակարգելու համար, խուսափեցաւ այդ բառի օգտագործումէն: Միջազգայնօրէն փախստական կ'անուանուին այլ երկրէ մը այլ երկիր ապաստանածները: Այս պարագային կը նշանակէ, որ Արցախը Ազրպէյճանէն տարբեր երկիր է:

Եզրոյթները, մասնաւոր քաղաքական եզրաբանութիւնը իր մէջ կը ներառէ իրաւականութիւն եւ այս պարագային բանակցային ռազմավարական առաջադրանքներու ուղենշային իմաստ:

Got Questions About **COVID-19?**  
A TEAM OF DOCTORS IS READY  
TO ASSIST YOU

call us on  
**01 518 014**

USM AFHIL  
ARMENIAN MUTUAL FUND

GlobeMed  
LIFE

**www.afhil.com**